յայտնի անհատների կողմից... իսկ դագաղի յետևից գնում էր չտեսնուած 30,000-ի մօտ մի բազմութիւն, որի մի ծայրն Ցիրանեան վերելքին էր հասել, միւսը դեռ խռնւում էր Վանքի բակում...

Խոջիվանք հասնելով՝ հերոսի դին զետեղւեց փոսի եզրին։ Մօտիկ ընկերներ և քահանաներ մի ստւար խումբ կանգնեցին շուրջը։ Իսկ դէմյանդիման Անդրանիկը իր զինւորական համազգեստով։ Անհագին տարածութեան վրայ բազմութիւն խռնւում էր և բառի բուն մտքով ասեղ գցելու տեղ չկար...Խօսելու ժամն էր. առաջին խօսեց պ. Մ. Վարանդեան, որից յետոյ խօսեցին և դրւատեցին շատեր. վեր հանելով մեր նմանօրինակ հերոսների հոգեկան և գաղափարական

արժանիքներ, Նրանց բարոյական կորովը որոնք իրենց անվեհեր անձնազոհութեամբ ապացուցեցին ամբողջ աշխարհին, որ հայ ժողովուրդը մեռնող ժողովուրդ չէ, այլ այն առասպելական հիդրայի նման՝ ամեն մի կտրուած գլխի փոխարէն բազմաթիւ նոր գլուխներ է բուսցնում...

## Մ. ՎԱՐԱՆԴԵԱՆԻ ԴԱՄԲԱՆԱԿԱՆԸ ՔԵՌՈՒ ԴԱԳԱՂԻ ՎՐԱՅ

«Իշխանական պատիւներով է գերեզման իջնում հայոց ազատութեան զինուորը։ Իշխանական պատիւներով էր, որ թաղեցին և Նրա աւագագոյն ընկերները. —այստեղ Խոջիվանքում Ջաւարեանն ու Դումանը, այնտեղ հեռու Պարսկաստանում՝ Եփրեմը,



Վարդան, Քեռի եւ Համազասպը

անդին, աւելի հեռու հորիզոններում՝ Քրիստափորը։

...Որովհետև իշխաններ են այդ մարդիկ իրենց անշուք, սպարտական վեհութեան մէջ, իշխաններ հայ մտքի ու սրտի, հայ ռազմական կորովի. հայ ցեղային արիութեան։

Մեծ, ծովացած բազմութիւն դագաղի շուրջը։ Ժողովուրդն է իր բոլոր խաւերով։ Հայ ինտելիգենցիան՝ իր լաւագոյն ներկայացուցիչներով։ Հայ զինուորութիւնը՝ իր փայլուն ռազմիկներով։ Եւ նրանց շարքում մէկը՝ որ մեծագոյն զինակիցն է անշնչացած հերոսի, մէկը՝ որ հոգին է մեր կամաւորական շարժման, մէկը՝ որի ներկայութիւնը առանձնապէս յուզիչ է դարձնում այս թաղման հանդէսը...

Այո, ժողովուրդն է, որ ու-



ղեկցել է միշտ Քեռիներին դէպի դամբարան։ Ժողովուրդն է. որ գուրգուրանքով պահպանում է հերոսների պաշտամունքը։ Ժողովրդական զանգուածներն են, որ խուռներամ գալիս են դագաղի առեւից, գալիս են ազատօրէն, ինքնաբերաբար իրենց վերջին յարգանքը մատուցանելու մի մարդու, որ ապրել մեռել է ժողովրդական դատի համար։

...Կենդանութեան օրով գուցէ լիովին չեն գնահատում այս մարդիկ, մահից յետոյ է, որ զգացւում է սարսափելի բացը...

Եւ անգամ նրանք, որոնք ամեն օր նիզակ են ճօճում անձնուրացների բանակի դէմ, համարելով այն «աղբիւր չարեաց», բարդելով նրա վրայ բոլոր ցաւերի պատասխանատուութիւնը,— անգամ նրանք ժողովրդական սգի

այս օրերին խոնարհւում են Բե-ւինների ղագաղի առջև...

Եւ դա պերճախօս ապացոյցն է այն կախարդանքի, կասեմ, բռնաւոր ազդեցութեան, որ անում են մեր ժողովրդական հերոսները ազգի բոլոր խաւերի վրայ։ Դա ապացոյց է մասամբ այն իրողութեան՝ որ սխալւում են չարաչար այն մարդիկ, որոնք կուրօրէն, առանց երկար տրամաբանելու, մեր ռազմիկների շարքերին են վերագրում մեր նորագոյն պատմութեան արհաւիրքները . . . . . . . . . . . .

Թող ուրիշները պատմեն ձեզ կենսագրութիւնը մեր հանգուցեալ ռազմիկի, սկսած առաջին քայլերից 1890-ին. Կարինում, երբ առաջին անգամ հայ ժողովուրդը ըմբոստանում էր տաճիկ բռնապետութեան՜ դէմ և երբ ա-



Անդրանիկը եւ իր Թիկնապահները

ռաջին անգամը մենք կովկասցի-ներս երգում էինք «Ձայնը հըն-չեց Էրզրումի լեռներէն»... Թող ուրիշները բացատրեն, թէ ին-չումն էր գաղտնիքը նրա անհա-գին ժողովրդականութեան. Թէ ինչու էր նա այնքան սիրուած իր վաշտերից ու վաշտապետներից... Ինքս միայն նրա դէմքն եմ տե-սել, նրա բազէի աչքերն եմ դի-տել մի քանի օր, առանց երկար խօսելու հետը, որովհետև խօսել չէր սիրում—մանաւանդ իր մա-սին—ըմբոստութեան այդ քուր-մը։ Դաժան, անհամբոյր էին նրա ձևերը, բայց նոյնքան դաժան չէր նրա սիրտը... Պարզ, լա-կեաց, համեստ,—համեստ մինչև կատարեալ ինքնաժխտում, զին-ուոր ազատութեան առանց թըմ-բուկի ու ժխորի... Պաղ էր ար-տաքինը, բայց կրակը ներսից



էր լափում նրան, ոգևորութիւնը խոր էր, անձայն, ինքնամփոփ։

Եւ միաժամանակ—կուռ, պա-ղափարական դիսցիպլինի մարդ։ Երբեմն դառնութեան ու յուզման վայրկեաններին ըմբոստացումի ժես-տեր կանէր, բայց և իսկոյն կը խորհէր ու շուտով նորէն կը վե-րադառնար անշշուկ, իր գոր-ծին։ Ի՞նչն էր ստիպում նրան երկու տարի սրանից առաջ, ար-դէն կորացած տառապանքի բե-ռի տակ, նորէն սլանալ դէպի կռւի դաշտ, թողնել ընտանե-կան խաղաղ կենցաղը Թեհրա-նում, ուր նա իրաւունք ունէր հանգստանալու, ամբողջ կեանքը կռւելուց յետոյ, իրաւունք ունէր հանգստութեան մէջ վայելելու իր անհամար դափնիները։

Ի՞նչն էր ստիպում... դիսցիպլի-նի «վճռական հրամայականը»,

իր ըմբոստ արիւնը և իր Ջինջ, քնքոյշ, անշահախնդիր սէրը դէպի հարազատ ժողովուրդը...

Դիսցիպլինի մարդիկ էին և նրանք, որ պառկած են երկու քայլ հեռու Քեռիի գամբարանից։ Դիսցիպլինի մարդ էր Դումանը իր պողպատէ կամքով և իր պաղ, անհաւոր վճռականութեամբ։ Դիսցիպլինի մարդ էր և միւսը, նրա դրացին, որի ձայնը քսան տարի ոգևորում էր հայ ըմբոստ երիտասարդութիւնը  դիսցիպլինի մարդիկ էին բոլորը, որովհետև լաւ գիտէին, որ առանց այդ կուռ, ընկերային դիսցիպլինի ոչ մի գաղափարական գործ պատմութեան մէջ չի յաղթանակել երբէք...որովհետև գիտէին և այն, որ հէնց այն Ուխտը, որին պատկանում էին նրանք, ամբողջ տասնեակ տարիներ կանգուն էր՝



Դ ր օ

շնորհիւ այդ կուռ, գաղափարական շաղախի. . . . . . . . . . . .

Եփրեմի հետ միասին Կուկունեանի պատմական արշաւախըմբում — և նոյն Եփրեմի հետ, քըսան տարի յետոյ, Պարսկաստանի ազատագրական շարժումներում: Երկու հայ դէմքեր թև թևի վարում էին ահագին երկրի ճակատագիրը, յենւած մի բուռն հաւատարիմ հայ քաջերի և պարսիկ բախտիարների վրայ... Եփրեմ — Քեռի. Քեռի — Եփրեմ — երկու անունները հոլովւում էին անդադար հայ ու օտար մամուլի մէջ, մինը հրամանատար սահմանադրական բանակի, միւսը աջ բազուկը Դիքտատորի: Նրանց յաղթանակի ու փառքի ձայնը հասնում էր Եւրոպա: մեր սրտերն էլ բարձրանում էին, հպարտ էինք մեր



ռազմիկներով, որոնց ձեռքում դողում էր հին Իրանը... Եւ երազի պէս սահում էր մեր աչքերից ամբողջ արեւելեան պատմութիւնը, մեզ թւում էր թէ Նեմեզիդայի մատը կար այդտեղ, թէ Եփրեմի, Քեռիի. Խէչօների այդ յանդուգն ու յաղթական թուրքներով մի դարաւոր վրէժ էր լուծւում...Պարսկաստանը՝ հին արիւնաուշտ դեսպոտների, Պարսկաստանը՝ Յազկերտների, Շապուհների, Շահաբբասների, հայահալած ու հայակուլ բռնաւորների — այդ աւեր, բռնապետական Պարսկաստանը թաւալւում էր մի բուռն հայ քաջերի ոտքերի տակ..

Այդտեղ է — թւում է ինձ — մեծագոյն խորհուրդը այն պատմական ու յաւէտ յիշատակելի օրերի:



Համազասպը



Եւ այդ հրաշքը իրականացաւ, շնորհիւ այն կուռ, գաղափարական ընկերակցութեան, որ 25 տարուց ի վեր կուրծք է տալիս բոլոր հողմերին, կռւում է և ճակատում շարունակ, թաղում է անդադար իր ամենաշքեղ պարծանքները, և այնուամենայնիւ, չի սպառւում երբէք հայկական ռե-բոսացանքը, հայ ժողովուրդը իր արիւնոտ արգանդից շարունակում է ծննդաբերել միշտ նոր ու նոր Ֆեդաիններ:

Փառք նրանց, որ գալիս են գեղեցկացնելու մեր ազգային կերպարանքը, փոքր ինչ փայլ ու զւարթութիւն հաղորդելու մեր լալկան պատմութեանը . .

. . . . .

Մնաս բարով, քաջ ընկեր: Այստեղ միայն, գերեզմանի մէջ հանգստութիւն կը վայելես քո

բազմատանջ ոսկորները։ Գնա՛ ննջիր խաղաղութեամբ քո հոգևոր հայրերի և հինաւուրց զինակիցների մօտ—Ռոստոմի, Զաւարեանի...

Ննջեցէք, մեծ ընկերներ. և թող մեր անսիրտ ճակատագիրը գէթ այժմ հոգայ, որ գալոց սերունդները չապրին այնպէս. ինչպէս դուք ապրեցիք. չճաշակեն այնպէս վիշտն ու տառապանքը, ինչպէս դուք ճաշակեցիք։

Ննջեցէք, վեհ ընկերներ, և թող ձեր անհեղ ուրուականները երթան մշտապէս բաղխելու մեր ստամբուլեան դահիճների դռները, երթան հասկացնելու այն ոճրանիւթ գանգերին, որ հայ ժողովուրդը, այնուամենայնիւ, սպանելու ժողովուրդ չէ, որ հայկական դատը, այնուամենայնիւ, պէտք է յաղթանակէ»...



Հայ կամաւորների խումբ

# ՀԱՅԸ ՉԻ ՄԵՌՆԻ

---

Թիւրքիան շատ լաւ է հասկացել, որ եթէ նա մի օր զրկւի եւրոպական և ասիական նահանգներից—այդ կորստի պատճառը լինելու են տեղային քրիստոնեայ հպատակների գոյութիւնը իր պետութեան մէջ, որոնք ամեն անգամ պէտք է առիթ տան քրիստոնեայ պետութիւններին միջամտելու Թիւրքիայի գործերին, և մի նոր արևելեան հարց բարձրացնելու։ Իր նահանգները չկորցնելու, և եւրոպական պետութիւնների միջամտութիւնից ազատ լինելու համար, Թիւրքը ստիպւած է ոչնչացնել քրիստոնեաներին։ Քրիստոնեաների պատճառով նա իր եւրոպական նահանգներից շա-



տերը կորցրեց և մնացածը կորցնելու վրայ է։ Իսկ ասիական երկիրներից իր ամբողջութիւնը պահպանել է միայն Փոքր Ասիան. որտեղ գլխաւոր քրիստոնեայ ազգութիւնը, որ սպառնում է պետութեան այդ մասի անջատման են հայերը. ուստի պէտք է ոչնչացնել նրանց և ցոյց տալ Եւրոպային, որ Հայաստանում հայ չկայ։

Բայց հայ ժողովուրդը մի զարմանալի ժողովուրդ է, նրան սպանելը եթէ չասեմ անհնարին, կարող եմ ասել, որ շատ դժւարին է։ Նա այն բազմագլխանի առասպելական վիշապն է, որը կոչւում է Հիդրա, որի իւրաքանչիւր ջախջախւած և կտրւած գլխի տեղ բսնում է մի նոր և աւելի զօրաւորը։ Դարերի ընթացքում, համաշխարհային դարբ-

նոցի սալի վրայ հայը այն աստիճան ծեծւեցաւ, տաշւեցաւ և կոկւեցաւ, որ երկաթի ամրութիւն ստացաւ։ Այժմ նրան ջախջախելը շատ հեշտ չէ, նա չափազանց տոկուն է։ Հայը տարաւ ու համբերեց ամենամեծ մոնղոլների բարբարոսութիւններին, որոնց համեմատութեամբ Թիւրքիան, այդ մոնղոլների այժմեան սերունդը պէտք է ճանճեր համարել։ Հայի երկրի վրայով անցան Մանղուլխանի, Լէնկթէմուրի, Ջինգիզխանի, Հուլաւունի և դրանց նման մարդկային հրէշների արիւնարբու հրոսակները։ Նրանք անցան ջարդեցին և ջարդւեցին և վերջապէս անհետացան, բայց հայը դարձեալ մնաց..., Եւ էլի կմնայ...

Րաֆֆի

Վանի Տերոս Արտալ փաշան



# ԱՆԱՍՆԱՑԱԾ ԵՐԵԽԱՆԵՐ

—

«Le Journal» լրագրի յայտնի աշխատակից Անրի Բարբին որն՝ հայկական կոտորածների մասին մի շարք յօդուածներ է հրատարակել, վերջերս թիւրքական գազանութիւնների նոր փաստեր է տալիս։

Անրի Բամին նկարագրում է անտէր մնացած հայ երեխաների սարսափելի և միևնոյն ժամանակ սոսկալի վիճակը, որոնք առանց ծնողների և ծանօթների թափառում են քարուքանդ եղած գիւղերում, ուր հասակաւորներն անգամ մեծ դժւարութեամբ հազիւ թէ կարողանան մի որևէ ուտելու բան ճարել իրենց համար, ուստի անողոք բախտի կամքին յանձնւած այդ երեխաներ միանգամայն անասնացնել են։ Եւ Ա. Բարբին հե-



տեսել սրտաճմլիկ դէպքն է պատմում. երբ ռուս կազակները վերցնում են մի բոլորովին քարուքանդ եղած գիւղ, նկատում են մի քանի երեխաների, որոնք փողոցում հաւաքւած են եղել մի ինչ որ բանի շուրջ, չըլսելով ոչ մօտեցող կազակների քայլերի և ոչ նրանց կանչի ձայները։ Երբ կազակներ մօտենում են այդ խմբւած երեխաներին հետևեալ սարսափելի պատկերն են տեսնում. երեխաները քաղցած գազանների նման կրծոտելիս են եղել փողոցում ընկած մի սատկած ձիու դիակը, որից սարսափելի գարշահոտութիւն է փչելիս եղել։ Միայն այն ժամանակ երեխաներ նկատում են կազակներին երբ նրանք սկըսում են հեռացնել նրանց ձիու հոտած դիակից։ Նկատելով կա-

զակներին երեխաները սկը-սում են փախչել վայրենի ա-ղաղակներ բարձրացնելով. կա-զակներին յաջողուել է բռնել նրանցից մէկին և յանձնել Կար-միր խաչի գթութեան քոյրերի խնամատարութեանը:

Երեխան բոլորովին կորցրել էր խօսելու ընդունակութիւնը և միայն կը բղաւում էր անասու-նի նման բառանչել: Կերակուրը ընդունում է հում և ուտում է վայրենի ոռնոցներով: Զնայած նրա վրայ գործ դրած ջանքե-րին, ոչ մի կուլտուրական ազ-դեցութեան չէր ենթարկւում ե-րեխան,

Եւ նմանօրինակ անասուն ե-րեխաները, ինչպէս ասում է Ան-րի Բարբին, Հայաստանի աման-յացած գիւղերում և դաշտերում, շատ են գտնւում . . .

# ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԿԱՐԵ-ՒՈՐ ԽՐԱՏՆԵՐԸ

—

Վերջին տարիներս կրթական գործը մեզանում որոշ չափով յա-ջող ընթացք է ստացել, բարե-կարգւում են եղած դպրոցները, հիմնւում են նորեր, նոյն իսկ գիւղական այն շրջաններ, որոնք մի քանի տարի առաջ լսել ան-գամ չէին ուզում դպրոցի մա-սին, համարելով այն շռայլու-թիւն, այժմ իրենք են միջոցներ ձեռնարկում սեփական դպրոց հիմնելու...

Ուրիշ խօսքով այժմս ազգային կրթութեան անհրաժեշտութեան գաղափարը խոր կերպով արմա-տանում է հայ ժողովրդի բոլոր խաւերում, և եթէ կան յետ ըն-կած անկիւններ ուր դեռ դըպ-րոցներ չկան, այդ էլ ոչ թէ չը-կամութեան հետևանք է, այլ

չքաւորութեան, որն ի հարկէ, ի վերջոյ ուևէ կերպով կբաւարարուի։

Ուրախալի երևոյթ է անշուշտ և այն, որ նոյնիսկ Վրաստանի խորքերում ցրուած վիրախօս հայերն անգամ, որ տասնեակ տարիներէ ի վեր կորցրել էին մայրենի լեզուով արտայայտելու ընդունակութիւնը, ներկայումս պահանջ են զգում ազգային կրթութեան, ազգային կուլտուրական վերածնութեան և մայրենի լեզուով դաստիարակութեան...

Բայց լոկ կրթութիւնը դեռ բաւական չէ... անհրաժեշտ է հոգ տանել ժողովրդի ազգային դաստիարակութեան, մանաւորապէս մատաղ սերնդի ընտանեկան դաստիարակութեան մասին... կրթուած մարդը կարող է կրթուած աւազակ լինել, եթէ նրա կրթութիւնը չէ ցօղուած դաս-



տիարակութեան բարերար ցօղով ասուած է մի առածը։

Մենք հայերս, աւելի քան մի ուրիշ ազգը, մեծ կարիք ունինք լայն կերպով, եւրոպական մըտքով դաստիարակուելու, որովհետև դարերի բռնակալական ռեժիմը այլասերել է մեր ժողովրդին և մեր քաղաքակրթութեան ձգտող ինտելիգենցիան պարտաւոր է աւելի ուշադիր կերպով վերաբերուել այդ անչափ կարևոր խնդրին... մանաւորապէս ընտանեկան դաստիարակութեան խնդրին, որի նշանակութիւնն այնքան մեծ է, որ մեզանից շատ աւելի լուսաւոր եւրոպական ազգերն անգամ քաղաքակրթութեան ամենագլխաւոր հիմքն են համարում...

Օրացոյցիս սահմանափակ ծաւալը թոյլ չի տալիս ընդարձակ

տեսութիւններ անել դաստիա-
րակութեան էութեան մասին ու-
րի համար հատորներն իսկ քիչ
են, ուստի ընթերցողներիս մի
փոքրիկ ծառայութիւն անելու
համար, բաւականանում եմ քաղ-
ւածօրէն մէջ բերել հատուածներ,
ազգային և եւրոպական մեծ հե-
ղինակներից որոնք կարծում եմ
անօգուտ չեն լինի։

—

Դաստիարակութեան արհեստը
նման է այգեպանի արհեստին, որի
հոգացողութեան տակ աճում և
պտուղ են տալիս ծառերը։ Ինչ-
պէս որ ծառեր իրենց ներքին
բուսական ույժն ունին, որի շը-
նորհիւ նրանք զարգանում և պը-
տուղ են տալիս, իսկ այգեպան
միայն տնկում, ջրում և հեռաց-
նում է այն բոլոր վնասակար
ազդեցութիւնները, որոնք ար-



գելք կարող էին լինել նրանց
բնական զարգացման, այնպէս
էլ դաստիարակը դաստիարակ-
ւողների վերաբերմամբ, նա չի
կարող իր սանիկի ներս այս
կամ այն ույժը թափանցել. նրան
կեանք և շնչաւորութիւն տալ, այլ
նա միայն աշխատում է, որ ոչ
մի արտաքին ազդեցութիւն նրա
ույժերի բնական զարգացման ըն-
թացքը չկասեցնի...

Կրթութիւնը հեշտացնելու հա-
մար անհրաժեշտ է 1. իր ժա-
մանակին սկսել, 2. նախապէս
մտքի վարժութիւններ անել,
3. ուսուցման միջոցին՝ հեշտից
դժուարին անցնել, 4. աշակերտ-
ներին չափից դուրս մտաւոր
աշխատանքներով չծանրաբեռնել.
5. սովորելու յառաջադիմութեան
մէջ չըվռազել, ուսուցումը ակա-
մայից չկատարել, այլ աշակերտ-

ների հասակի համեմատ և նրանց իսկական ձգտումով վարուել, 7. Գործնականապէս, և այն էլ միատեսակ եղանակով աւանդել... ուսուցման հիմնաւոր ուղղութիւն տալու նպատակով, աշակերտներին միայն օգտաւէտ տեղեկութիւններ հաղորդել և իսկական հիմքերի վրայ հաստատել։

Ինչպիսի հարցեր որ երեխան առաջարկէ, ոչ մէկը չպէտք է առանց պատասխանի թողնել և կամ դառնութեամբ մերժել։Պէտք է հասկանալի կերպով երեխային բացատրել այն ամենը՝ ինչ որ նա որոշեալ րոպէին ցանկանում է իմանալ։ Գիտութիւն ըստանալը նրան ուրախացնում է և յօժարութեամբ էլ հարցեր է առաջարկում։ Երեխայի հարցերին պատասխանելով՝ երբէք չը պէտք է նրա վրայ ծիծաղել, ինչ-



քան էլ որ նրա հարցերը պարզ լինին։ Երեխաներին նոյնպէս չպէտք է խաբել հարցերին պատասխան տալու ժամանակ։ Եթէ պատահի որ երեխան, այնպիսի առարկայի մասին հարցնէ, որը նրա համար դեռ ևս վաղ է կամ անտեղի է իմանալ, այն ժամանակ աւելի լաւ է ուղղակի պատասխանել, թէ այդ նրա համար դեռ ևս հարկաւոր չէ իմանալ, քան թէ սուտ կամ ծաղրական պատասխանով խաբել։ Երեխայի իսկական ուսուցմանը ձեռնամուխ լինելով՝ պէտք է աշխատել, որ ուսուցումը նրան դուրեկան լինի և դէպի զբաղմունքն էլ սէր զարգանայ։

Շատ անգամ մարդկանց ընդունակութիւնները իրար հետ տեսակ տեսակ յարաբերութիւն-

ների մէջ են գտնւում. դրա համար էլ կարող է պատահել, որ առարկայի կամ մի քանի առարկաների մէջ հանճար ունեցող անձը թուլամիտ գտնւի միւս առարկաների վերաբերմամբ օրինակ մի աշակերտ կարող է մեծ ընդունակութիւն ունենալ բնագիտութեան վերաբերմամբ, բայց պակաս ընդունակութիւն ցոյց տալ պատմութեան վերաբերմամբ, մէկը լեզուներ հեշտ է սովորում իսկ թւաբանութիւնը դժւար իսկ մի ուրիշ ընդհակառակը...և դա շատ բնական է, որովհետև ինչպէս իւրաքանչիւր ստամոքս չէ կարող միևնոյն չափով կերակուր վերցնել, այնպէս էլ չի կարելի բոլոր բնաւորութիւնների համար միևնոյն կանոններ սահմանել...

Չպէտք է երեխաներից չափա-



զանց շատ բան պահանջել, անհրաժեշտ է պահանջել միայն այն, որքան գիտես որ նա կարող է, իսկ պահանջներ անելիս, պէտք է եռանդուն կերպով հետևել նրանց կատարման: Այդ առթիւ ամեն մի ներողամտութիւն վնասակար է: Երեխան պէտք է քաղաքավարութիւն և լաւ ձեւեր սովորի, որովհետև թէ մէկը և թէ միւսը իւրաքանչիւր բարեկիրթ մարդու համար անհրաժեշտութիւն են կազմում: Եւ երեխան միայն այն ժամանակ լաւ ձևեր և քաղաքավարի վարմունք կսովորի երբ քաղաքավարի և վայելուչ մարդկանց շրջանում կլինի: Ուստի անհրաժեշտ է որ ծնողներն աշխատեն իրենց քաղաքավարութեամբ և վայելչութեամբ բարի օրինակ լինել իրենց փոքրիկներին, որովհետև

ոչ մէկի օրինակ այնպէս խոր չէ տպաւորւում մանուկի մտքի և ուղեղի վրայ ինչպէս իր ծնողներինը։ Պար գալը նոյնպէս շատ է նպաստում կոպիտ ձևերի բընաջնջման և միւս կողմից էլ բարեվայելչութիւն է սովորեցնում ուստի պէտք է աշխատել, որքան կարելի է կանուխ սովորեն. այնուամենայնիւ այդ բոլորը պէտք է սանիկների հոգու և սրտի տրամադրութեան համաձայն լինին։

Երեխաների վրայ հաստատեցէք ձեր իշխանութիւնը, և ամրացրէք ձեր հեղինակութիւնը, որքան կարելի է շատ կանուխ, որպէս զի նրանց վրայ ներգործելու հնարաւորութիւն ունենաք...Թող երեխան սիրէ և վախենայ ձեզանից, այդ երկու զգացումները դաստիարակու-



թեան ղեկն են։ Երբ ձեր իշխանութիւն կհաստատէք և ցոյց կտաք որ նա ձեզանից կախում ունի, երբ ձեր մշտական խստութեամբ կազատէք նրան երեխայական վատ յանցանքներից, որոնք են ստախօսութիւն, յամառութիւն, անհնազանդութիւնը, նա կհասկանայ դէպի ինքն ունեցած ձեր սէրը և գիտակցաբար և վառ կերպով նա ձեզ կը սիրէ, այն ժամանակ դուք կարող էք ձեր գործողութիւնների եղանակը փոխել, այսինքն որքան, որ նա մեծանայ նոյնքան էլ դուք փոքր առ փոքր ձեր խստութիւններն ու հրամաններն յետին կարգ կտանէք, և ասպարէզ կտաք նրա հետ ունենալիք մտերմական և քաղցր խօսակցութեան և լուրջ դատողութիւններին։

Մօր ձեռքից երեխան անցնում է հօր ձեռքը։ Ինչպէս իսկական կերակրողը պէտք է մայրը լինի, այնպէս էլ իսկական դաստիարակողը պէտք է հայր լինի։ Խելահաս, թէկուզ անկիրթ հայրը աւելի լաւ է դաստիարակում, քան թէ աշխարհիս միջի ամենահմուտ ուսուցիչը. որովհետեւ ջանասիրութիւնը շուտով կփոխարինէ գիտութեան և հմտութեան պակասութեանը։ Հօր պարտականութիւնները իր որդոց դաստիարակելու գործում, երբէք չպէտք է յետին տեղն ընկնի․ ով որ չի ցանկանում հօր պարտականութիւնները կատարել, նա իրաւունք չունի հայր լինելու։ Բայց ինչպէս մայրեր իրենց թոյլ առողջութեան պատճառով, յաճախ իրենց որդոց կերակրելուց հրաժարւում են, այնպէս և



հայրերը, զանազան գործերով զբաղուած լինելու պատրւակով, երեխաների դաստիարակութեան գործը դաստիարակներին են յանձնում։ Դաստիարակութեան համար անհրաժեշտ է որ նա վարձկան չլինի, և իր պարտականութիւնն էլ փողով չգնահատէ։

—

## ԱՄՓՈՓ ԴԱՏԻՐԱՆՆԵՐ ԾՆՈՂՆԵՐԻՆ

Հրամայիր և արգելիր երեխաներին հնար եղածին չափ ուշ-ուշ, որպէս զի չկորցնես նրանց աչքում քո հեղինակութիւնը։

2. Երբ հրամայում կամ արգելում ես, արտայայտուիր հանգարտ և ինչպէս էլ լինի ձեռք բեր հնազանդութիւն։

3. Հազուադէպ դէպքում միայն

սպառնացիր սակայն սպառնա-լիքդ կատարիր։

4. Ամեն մի անհնազանդու-թիւն պէտք է պատժւի, երեխա-յի հասկացողութեան և հասակի համեմատ։

5. Պատժիր ոչ բարկացած ժա-մանակդ։

6. Մի փորձիր երեխայի հետ բանակցութեան մէջ մտնել, հա-մոզել կամ ապացուցել։

7. Անկարելի բան մի հրա-մայիր։

8. Եթէ ուզում ես երեխային մի որևէ բան սովորեցնել, գործ-դիր բոլոր ույժդ և աշխատիր ո-րոշ արդիւնք ստանալ, մի կողմ թող բարոյագիտական և վերա-ցական դատողութիւնները։

9. Հրապարակով գովիր և ա-ռանձին յանդիմանիր, առանձին ասած ը աւելի ազդեցութիւն է



ունենում, իսկ հրապարակային գովեստը աւելի սրտապնդում է։

## ԿՆՈՋ ԿՈՉՈՒՄ

Կինը ինչպէս որ սիրում է իր զաւակին. նոյն մայրական սէրը պէտք է տարածէ և իր ամուս-նու վրայ։ Այս թէև բնականա-պէս այսպէս է լինում, բայց ոչ գիտակցաբար։ Շատ քիչ այր և կին ամուսիններ կըգտնուին, որ իմանան թէ այր ամուսինը նոյն-պէս մի մանուկ է՝ կնոջ սիրոյն և գթութեան կարօտ։ Շատ հա-զիւ կպատահի, որը այր ամու-սինը չսիրէ իր կնոջը, եթէ վեր-ջինս մտերիմ լինի իր մայրա-կան սիրոյ մէջ դէպի ամուսինը։ Մենք տեսնում ենք շատ անգամ, որ նորահարս ամուսինը ինքն է ձևանում երեխայ և ցանկանում

է, որ նորափեսան իրեն փայփայէ։ Այս մեծ սխալ է և աններելի։ Այր մարդը երբեք մայրութիւն անել չի կարող, բնութիւնը այդ յատկութիւն միայն կնոջն է յատկացրել։ Զաւակի բարոյական կրթութեան պատասխանատուն մայրն է, եթէ բարոյակիրթ է զաւակը, փառք և պարծանք նրա մօրը, իսկ եթէ չարակիրթ է, — սուգ և տրտմութիւն նրա մօրը, այդպէս էլ ճիշտ—եթէ մէկ մարդ ամուսնանալուց յետոյ ազնւանում է, փառք և պարծանք նրա կնոջ, իսկ եթէ անազնւանում, անբարոյականանում է—ամօթ և նախատինք նրա կնոջը։

Դ. Ա.

## ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅԵՐԻ ԹԻՒԸ

| | |
|---|---|
| **Երևանի նահանգ.** | |
| Լուսաւորչական հայեր | 596,022 |
| Այլ դաւանութեան հայեր | 12,857 |
| **Գանձակի նահանգ** | |
| Լուսաւորչական հայեր | 396,323 |
| Այլ դաւանութեան հայեր | 492 |
| **Կարսի շրջան** | |
| Լուսաւորչական հայեր | 106,765 |
| Այլ դաւան. պատկ. հայեր | 5,273 |
| **Թիֆլիսի նահանգ** | |
| Լուսաւորչական հայեր | 350,715 |
| Այլ դաւանութեան հայեր | 43,300 |
| **Բագւի նահանգ** | |
| Լուսաւորչական հայեր | 112,482 |
| Այլ դաւանութեան հայեր | 1,044 |
| **Բաթումի շրջան** | |
| Լուսաւորչական հայեր | 10,058 |
| Այլ դաւանութեան հայեր | 10,066 |
| **Քութայիսի նահանգ** | |
| Լուսաւորչական հայեր | 6,720 |

| | |
|---|---|
| Այլ դաւանութեան հայեր | 943 |
| Դաղստանի շրջան | |
| Լուսաւորչական հայեր | 4,830 |
| Զաքաթալի վիճակ | |
| Լուսաւորչական հայեր | 2,902 |
| Սուխումի վիճակ | |
| Լուսաւորչական հայեր | 17,886 |
| Չերնօմորեան նահանգ | |
| Լուսաւորչական հայեր | 16,758 |
| Ընդամենը՝ | 1,695.435 |

—

## ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՆՈՐ ԳԵՐՑԵՊՊԵԼԻՆՆԵՐԸ

Լոնդոնում լորդ Մոնտէգին իր ճառում հաղորդել է համայնքների պալատին գերմանական նոր ցեպպելինների մեծութեան մասին։ Նրանց մեծութիւնը հասնում է 2 միլլիոն խորանարդ ոտնաչափի, երկարութիւնն է



780 ոտնաչափ, լայնութիւնը 80 ոտնաչափ։ Ամենամեծ արագութիւնը հասնում է իւրաքանչիւր ժամում 75 մղոն միջին արագութիւնը՝ 35 մղոն, գործողութեան շառաւիղը՝ 3 մղոն։ Մեքենաների ուժը հասնում է 15 հազար ձիերի ուժի։ Իւրաքանչիւր այդպիսի ցեպպելին բարձրացնել կարող է 5 տոնն պայթուցիկ նիւթեր և կարող է բարձրանալ 17,000 ոտնաչափ բարձրութեան և ունի 6 կամ 7 մեքենայ։ Ցեպպելինը սպառազինուած է գնդացիրներով։ Վերցնում է 30 կամ 35 ծառայող։ Գերմանիան յոյս ունի, որ մինչև հոկտեմբեր կը հասցնէ երեք այդպիսի ցեպպելին։

## ՄՏՔԵՐ ԵՒ ԱՖՈՐԻԶՄՆԵՐ

### Զանազան հեղինակներից

—Առողջ միտք լինում է առողջ մարմնի մէջ։

—Տղայ կրթելը մի անհատ կրթել է, իսկ աղջիկ կրթելը տան ամբողջ սերունդ կրթել է։

—Միշտ ուրախ ու զւարթ եղէք, ամենագեղեցիկ դէմքը՝ ժանտ և կրքոտ դէմքով է փչանում. քաղցր խօսք մեզնից փող չի պահանջում, մինչդեռ շատ թանկագին է։

—Ուրախութիւնը, զւարթութիւնը, քաղցրաձայն ծիծաղելը երեխայի հոգու առողջութիւնն է

—Քնել ցանկացածիդ պէս պառկիր, զարթելուդ պէս վեր կաց, քաղց զգալուդ պէս ճաշիր։

—Մաքրութիւնը պահապան և աղբիւր է առողջութեան։



—Մեծ խնամքով պահպանիր ծաղիկ հասակդ մեղքի խորշակից, որպէս զի կեանքիդ աշնան նրա դառն պտուղ չճաշակես։

—Եթէ ուզում ես առողջ լինել, բարի եղիր։

—Լաւ է խնամել առողջութիւնը քան թէ հիւանդութիւնը։

—Լաւ ապրողը երկար կապրի։

—Ոչ ոքի հագուստից մի դատէք, մարդուն Աստուած է ստեղծում, իսկ հագուստը դերձակն է կարում։

—Թող չտեսնեմ տունը առանց մանուկի, և գարունն առանց ծաղկի, ասում է առածը։

### ՅՈՅՍ

Յոյսը աղքատի ամենամեծ օգնականն է և իրաւամբ «աղքատի հաց» է կոչւում։ Բայց և այնպէս ամեն մի մեծ գործի շար-

ժառիթ և զօրավիգ նոյնպէս յոյսն է։ Պատմում են, որ երբ Աղեքսանդր Մակեդոնացին գահ նստաւ, հօրից ժառանգած բոլոր երկիրները բարեկամներին բաժանեց։ «Հապա քեզ ի՞նչ կըմնայ» հարցրեց Պիրտեկաս։

—Ստացւածքներից ամենամեծը՝ յոյսը՛, պատասխանեց Աղեքսանդրը։

«Իւրաքանչիւր ազնիւ ձիրքը տաք է պահւում յուսոյ անշէջ կրակով»։

# ՍԻՏԻ ՆՈՒՄԱՆԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

(Արաբական պատմւածք)

Այն ժամանակ Հարուն-էլ-Րաշիդ ամիրապետը Սիտի Նուման անուն կրող երիտասարդին դառնալով՝ հրամայեց պատմել այն պատճառներ, որոնք առիթ են ծառայել նրան իր մատակ ձին այնպէս անգթօրէն տանջելուն։

— Իշխանդ հաւատացեալների, թէև մարդիկ սոսկումով են ներկայանում ձեր վեհափառութեան կամ գահոյքին, բայց ես ինձ ոբաւական ազատ եմ զգում, որով դէպի ձեր վեհափառութիւն զգացած ակնածական երկիւղը չի կաշկանդում լեզուս, ինչպէս նաև ձեր հանդէպ ունեցած հնազանդութեան պարտականութիւ-

նը չի թոյլ տալիս ինձ իրողու-
թեան հակառակ բաներ պատմե-
լու, ուստի չեմ համարձակւում
ասելու, որ մարդոց մէջ ամենից
կատարեալն եմ, սակայն այն
աստիճան յանցաւոր էլ չեմ, որ
օրէնքի խստութիւնից երկնչիմ,
թէև խոստովանում եմ. որ ան-
գիտակցաբար մեղանչելուց զերծ
չեմ եղել, որի հետևանքով մի
քանի ժամանակից ի վեր այն-
պէս չարաչար տանջւում եմ մա-
տակ ձիուս, որին երէկ ականա-
տես եղաք ձեր վեհափառութիւն.
բայց համոզուած եմ Տէր, որ ինձ
աւելի կարեկցութեան քան պատ-
ժի արժանի կհամարէք, երբ լը-
սէք իմ պատմութիւնս, ուստի
առանց յառաջաբանովս ձանձ-
րացնելու, պատմեմ ինձ պատա-
հած դէպքը։

—



Չեմ ցանկանում իմ ծննդեան
մանրամասնութիւններ պատմե-
լով յոգնեցնել ձեր վեհափառու-
թեան, մանաւանդ որ դա այն-
պիսի մի նշանաւոր դէպք էլ չէ,
որ արժանի լինի ուշադրութեան։
Գալով բաղդի ինձ շնորհաց
հարստութեան, պէտք է խոստո-
վանեմ, որ իմ նախնիքս շնորհիւ
իրենց խնայողութեան, չափաւոր
ու համեստ ապրելու չափ հարս-
տութիւն թողին ինձ, որով ա-
ռանց որևէ փառասիրութեան և
որևէ մէկին բեռ լինելու խա-
ղաղ կեանք էի վարում։

Իմ երջանկութիւնս կատա-
րեալ անելու համար, միայն մի
բան էր պակասում ինձ, այն էր,
մի գեղեցիկ կին, որ լիովին
սիրտս գրաւէր և ինձ սիրելով
իմ երջանկութեանս մասնակից
լինէր. բայց Աստուած չուզեց ինձ

մի այդպիսի կին շնորհել, այլ ընդհակառակ, իմ կոյր բաղդիցս ինձ այնպիսի մի կին տւեց, որ մեր ամուսնութիւնից անմիջապէս յետոյ, սկսեց այն աստիճան իմ համբերութիւնս հատեցնել. որ միայն ներկայ եղող մարդիկ կարող են նրա մասին մի գաղափար ունենալ։

Ձեր վեհափառութեան յայտնի է, մեր սովորութիւն, որ նշանւածները առանց իրար տեսնելու են ամուսնանում, ուստի եթէ իրեն վիճակւած կինը դարշանք պատճառելու չափ տգեղ էլ լինի, էրիկը իրաւունք չունի գանգատւելու։

Առաջին անգամ, որ կնոջս սովորական արարողութեամբ տուն բերելուց յետոյ երեսը տեսայ, շատ ուրախացայ, որ ինձ չէին խաբել, նրա գեղեցկութեան վըր-



րայ տւած տեղեկութիւններով, որովհետև իմ ճաշակիս համեմատ էր և շատ հաւանեցայ։

Հարսանեաց հետևեալ օրը, բազմատեսակ կերակուրներով ճաշ պատրաստեցին մեզ համար, երբ սեղան բացւած՝ ճաշասենեակ մտայ կնոջս այնտեղ չըտեսնելով կանչել տւի։ Բայց նա երկար սպասեցնել տալուց յետոյ միայն եկաւ, ես իմ անհամբերութիւնս ծածկեցի իրենից և սեղան նստեցինք։

Նախ փլաւից սկսեցի, ու սովորականի համեմատ գդալով էի ուտում. կինս ընդհակառակ փոխանակ ամենքիս նման գդալ գործածելու, գրպանից մի տուփ հանեց ու նրա միջից տեսակ մը ականջի մաքրիչ քաշեց, և սկըսեց նրանով հատիկ-հատիկ փըլաւից բերան տանել…

Այդ տեսակ կերակուր ուտելու վրայ շատ զարմացայ.

— Էմինէ, ասի նրան,— այդպէս էր կնոջս անունը,— միթէ ձեր տանը փլաւ այդպէս էք ուտում, կամ գուցէ քիչ ուտելուդ համար ես այդպէս անում, թէ ուզում ես բրինձի հատիկներ համրել, որ ուրիշ անգամ դրանից աւելի չուտես։ Եթէ խնայողութիւն անելու մտքով ես այդպէս անում, և ուզում ես ինձ հասկացնել, որ շռայլութիւն չանեմ, վստահ եղիր, որ ջանքերդ զուր են, և իմացիր, որ այդ կողմից մենք երբէք չենք կործանուի, հանգիստ ապրելու համար պէտք եղածին չափ ունենք, ուստի մի քաշուիր, իմ սիրելի Էմինէ, և ինձ նման կեր։

Այսպէս սիրալիր կերպով յորդորելով, կը յուսայի փոխարէն



մի քաղցր պատասխան լսել նրանից, բայց Էմինէ առանց մի բառ արտասանելու միենոյն կերպով ուտելը շարունակեց, և սիրտս աւելի ցաւեցնելու համար սկսեց մէջջէմէջ մի մի հատ փլաւ վերցնել, և միւս կերակուրներին էլ ձեռ չուեց, այլ երբեմն հացի փշրանքի մի կտոր բերան էր տանում, որով մի ծիտ անգամ կշտանալ չէր կարող։

Էմինէի այդ աստիճան յամառութիւնը ինձ վշտացրեց, սակայն նրան արդարացնելու համար, ուզեցի կարծել, որ դեռ տղամարդկանց հետ ճաշելու անսովոր է, մանաւանդ իր ամուսնու հետ, որի մօտ համեստութիւն պահել պատուիրած կլինէին անշուշտ, այդ համեստութիւնը չափազանցութեան էր հասցնում։ Կարծեցի նաև որ նա-

խապէս ճաշած կլինէր, քանի որ այդպէս քիչ էր ուտում. կամ գուցէ ուզում էր սոված մնալ, որ յետոյ աւելի ախորժակով ճաշէր։ Այս տեսակ նկատումներով բան չասի իրեն, որ չվշտանայ, և իմ դժգոհութիւնս ծածկեցի։ Ճաշից յետոյ այնպէս անտարբեր կերպով մօտից հեռացայ, որ կարծես նրա արտառոց ձևերից երբէք դժգոհած չլինէի։

Երեկոյեան ընթրիքի միջոցին նոյն վարմունքը շարունակեց, ինչպէս նաև հետևեալ օրը, և ամեն անգամ, երբ միասին սեղան էինք նստում, միևնոյն կերպ էր վարւում, սկսեցի մտածել, թէ անկարելի է մի կնոջ համար այդչափ քիչ սնունդով ապրել, ուստի այդ բանի մէջ անպատճառ ինձ մի անծանօթ գաղտնիք կայ. հետևաբար որոշեցի կեղծել,



և այնպէս ձևացնել, որ իբր թէ նրա գործերին իսկի ուշադրութիւն չեմ դարձնում, յուսալով միանգամայն, որ ժամանակի ընթացքում կվարժւէր ցանկութեան պէս հետս վարւելու, բայց յոյսերս զուր էին, որին շատ չանցած համոզւեցի։

Մի գիշեր Էմինէն ինձ խոր քնած կարծելով կամաց վեր կացաւ և մեծ զգուշութեամբ սկըսեց հագնւել. չըգիտենալով թէ ինչ նպատակով է իր գիշերային հանգիստ վրդովւում դիտմամբ սուտ քուն ձևացրի և սկսեցի հետաքրքրութեամբ դիտել նրա շարժումներ. բայց նա հագնըւելուց յետոյ առանց որևէ շշուկի սենեակից դուրս ելաւ։

Այն ժամանակ ես էլ իսկոյն անկողնիցս վեր թռայ, և վերարկուս վրաս ծածկելով հետևեցի

նրան, բարեբաղդաբար ժամանակին հասնելով տեսայ նրա փողոց դուրս գալը. իսկոյն դէպի փողոցի դուռ վազեցի, որն նա կիսաբաց էր թողել, և լուսնի լուսով, նկատեցի որ մեր տան մօտ գտնուած գերեզմանատուն մտաւ. ես էլ չտեսնուելու համար պէտք եղած զգուշութեամբ գերեզմանատան պատին մօտեցայ և զարմանքով տեսայ Էմինէիս մի փէրիի հետ:

Ձեր վեհափառութիւն գիտէ անշուշտ, որ տեսակ մը արու և էգ փէրիներ կան, որոնք սովորաբար աւերակներու մէջ են ապրում, որտեղից յանկարծ մենակ անցորդներու վրայ յարձակուելով՝ կապանեն և նրանց միսը կուտեն, իսկ եթէ անցորդներ չգտնեն գիշերները գերեզմա-



նատները կերթան և նոր մեռելներ հանելով կըճաշակեն:

Չեմ կարող պատմել թէ որքան մեծ սարսափ զգացի, երբ կնոջս այդ փէրիին հետ տեսայ: Եւ ինչ տեսնեմ, նոյն օրը թաղուած մի դիակ հանեցին, փէրին զայն կտոր-կտոր ջարդեց և յետոյ փոսի եզերքին նստելով կնոջս հետ միասին կերան: Այդպիսի անգութ և նողկալի ճաշ արած միջոցին իրար հետ հանդարտ խօսում էին, բայց շատ հեռու լինելու պատճառով չկարողացայ մի բառ անգամ լսել նրանց խօսակցութիւնից: Երևի իրենց խօսակցութիւնն էլ իրենց ընթրիքի նման այլանդակ պիտի լինէր, Օ՜ վեհափառ տէր: մինչև այժմս էլ երբ այդ տեսարան միտս է ընկնում, ամբողջ մարմինովս սկսում եմ դողալ:

Երբ այդ քստմնելի ընթրիք վերջացրին, դիակի մնացորդները փոսի մէջ լեցնելով, նորից հողով ծածկեցին։ Ես թողի նըրանց իրենց գործին և շտապով տուն վերադարձայ. Ներս մըտնելիս դուռը կիսաբաց թողի, ինչպէս որ գտեր էի, սենեակս գալով նորից պառկեցի և սուտ քուն եղայ։

Քիչ յետոյ Էմինէն առանց աղմուկի ներս մտաւ և հանուելով պառկեց, մտքում ուրախանալով անշուշտ, որ առանց իմ իմանալուն այդպէս լաւ էր յաջողեցրել այդ գործը։

Միտքս այդ գարշելի և բարբարոսական գործով զբաղուած, որին քիչ առաջ ականատես էի եղել, ինչպէս նաև այդ գարշանք գործողին հետ պառկած լինելէս զզուած, երկար ժամանակ աչքս



փակել չկարողացայ. բայց վերջապէս քնեցի, սակայն քունս այնպէս թեթև էր, որ երբ առաւօտեան դէմ իմամը աղօթում էր, ձայնից արթնացայ, հագնըւեցի ու մզկիթ գնացի։

Աղօթելուց յետոյ, քաղաքից դուրս ելայ և այդ առաւօտ պարտէզներ զբօսնելով անցկացրի։ Մտածում էի, թէ ինչ միջոցով կնոջս ընթացքը փոխեմ։ Խիստ միջոցներ գործադրելու միտքը մի կողմ թողի. որոշեցի քաղցրութեան ճամբան բռնել, որպէս զի այդ նողկալի սովորութիւնից զինք փրկեմ. այս տեսակ մտածութիւններով պաշարուած տուն հասայ և ճիշտ ճաշի միջոցին ներս մտայ։

Երբ Էմինէն ինձ տեսաւ, կերակուր բերեց և ճաշի նստեցինք։ Տեսայ որ դարձեալ փլա-

ուից հատիկ-հատիկ էր ուտում, այն ժամանակ ամենայն հանգստութեամբ ասի.

— Էմինէ, գիտես թէ ինչքան զարմացնում է ինձ քո այդ վարմունքը, երբ մեր հարսանեաց հետևեալ օրը նկատեցի որ քիչ ես ուտում այդ կերակուրից, եթէ իմ տեղ մի ուրիշ լինէր շատ պիտի վշտանար, գիտես նաև, որ բաւական համարեցի ասելով, որ սաստիկ վշտացնում ես ինձ, քո այդ վարմունքովդ, աղաչելով միանգամայն, որ միւս կերակուրներից էլ ուտես։ Սակայն բոլոր իմ խրատներս անլսելի եղան և մինչև օրս էլ ընթացքդ չփոխեցիր, որով ինձ մեծ վիշտ ես պատճառում. ես չեմ ուզում քեզ բռնադատել, և ցաւում եմ որ նկատողութիւններս սիրտդ պիտի վշտացնեն.բայց Էմինէ,ա-



սա ինձ խնդրեմ, միթէ՞ մեր սեղանի միսերը մեռելների մսից անհամ են։

Բայց հազիւ թէ այս վերջին խօսքերը արտասանել էր, որ Էմինէն հասկանալով, որ առաջի գիշերը նրա ընթացքը դիտել եմ, այնպէս կատաղեց, որ չէր կարելի բացատրել, երեսը կրակ դարձաւ, աչքերը դուրս պրծան և կատաղութիւնից սկսեց փրփրոտել։

Նրա այդ սոսկալի վիճակը տեսնելով ահ ու սարսափ զգացի. գրեթէ անշարժ մնացի և չկարողացայ արգելել այն անռելի անօրէնութիւնը, որ իմ դէմս կպատրաստէր և որի համար ձեր վեհափառութիւնը սաստիկ պիտի զարմանայ։ Իր զայրոյթի սաստկութեան միջոցին սեղանի վրայ գտնուած Գոռով ․ի

բաժակը վերցրեց և մատները մէջ թաթախելով, մի քանի անիմանալի բառեր արտասանելով՝ այդ ջրից երեսիս սրսկեց կատաղի ձայնով մը ասելով.

— Թշւառական, ընդունիր քո հետաքրքրութեանդ պատիժը, ու շուն դարձիր։

Այն ինչ էմինէն, որի վհուկ լինելը չէի կարծում, այդ դիւական խօսքերը արտասանեց, որ ես յանկարծ շան կերպարանք ստացայ։ Այդ յանկարծական փոփոխութիւնը այնպիսի մի զարմանք պատճառեց ինձ, որ նախ ես չկարողացայ խոյս տալ, և շփոթուած մնացի, հետևաբար նա ժամանակ ունեցաւ գաւազան մը առնելով ինձ անխնայ ծեծել։ Ճշմարիտ եմ ասում այնպիսի հարւածներ էր իջեցնում,



որ ես չգիտեմ թէ ինչպէս նոյն միջոցին այնտեղ չսատկեցի։

Նրա կատաղութիւնից ազատւելու համար կարծում էի թէ գաւիթ փախչելը լաւագոյն էր, սակայն մինոյն կատաղութեամբ դարձեալ ետևիցս վազեց և ինչքան որ ճարպիկութիւն գործ դրի այս ու այն կողմ վազելով, չկարողացայ նրա ձեռքից ազատւել, որ գնալով ծեծս սաստկացնում էր։ Վերջապէս տւած հարւածներից ձանձրացած և ետևիցս վազելուց յոգնած ու ինձ սպանելու գործին մէջ չյաջողելու վրայ աւելի զայրանալովՆոր հնարք մտածեց, փողոցի դուռը կիսով չափ բացեց, որպէս զի այնտեղից փախչելուս միջոցին ինձ դրան արանքին ճզմէ։ Ինչքան որ շուն էի, բայց նրա խորհուրդը հասկացայ, և որովհետև

ներկայ վտանգը միշտ հնարագէտ է անում մարդուն, այնպէս լաւ ընտրեցի դուրս թռչելու ժամանակը որ իր այնքան ուշադրութիւնը իդերև ելաւ, միայն պոչիս ծայրը մի քիչ ճզմըւեց, բայց այդ ոչինչ։

Սակայն կերածս ծեծից զգացած սաստիկ ցաւերէս, փողոցներ վազելով սկսեցի հաչել, որի համար փողոցային շներ չորս կողմից վրայ թափւեցին և ինձ սկսեցին հալածել, թէև ես շատերին խածեցի, բայց դրանց հալածանքից ազատւելու համար, ոչխարի խաշած գլուխ ծախողի խանութ նետւելով ազատւեցայ. Հիւրընկալս կարեկցութեամբ պաշտպանեց ինձ, ետևից վազող շներին արտաքսեց, որի միջոցին ես առիթից օգտւելով, շտապեցի մի անկիւնում թագնւել և էմինէի ինձ տւած սովական հարւածներից քիչ հանգստանալ։ Թէև յետոյ խանութի տէր շատ աշխատեց ինձ գտնել և դուրս հանել, բայց ես հակառակ նրա ցանկութեան այդ օրն այդտեղ գիշերեցի։



Հետևեալ օրն երբ խանութպանը իր կերակուրները դասաւորելով էր զբաղւած, դուրս ելայ խանութից, և ճանապարհս պիտի շարունակէի, երբ նկատեցի, թէ ինչպէս հարևան շները մսի հոտն առնելով շրջապատել են ինձ ապաստանող գլխավաճառի խանութը, ես էլ քաղցած լինելով նրանց խառնւեցի և աղերսող հայեացքով հիւրընկալիս նայեցի։

Հիւրընկալս ինձ ճանաչելով, մասնաւոր հոգ տարաւ որ ես կշտանամ, մսի կտորները աւելի

ինձ գցելով քան միւս շներին։ Երբ բաւականաչափ կշտացայ, պոչս օրօրելով նորից իր խանութ մտնել փորձեցի, բայց այս անգամ անողոքելի եղաւ, ոչ միայն չթողեց, այլ գաւազան վերցնելով այնպէս յարձակւեց վրաս, որ ես բարւոք համարեցի հեռանալ։

Այդ տեղից հազիւ մի քանի տուն հեռացել էի, որ մի հացագործի խանութի հանդիպեցի, որի տէրը ոչ միայն խաշոմնիկի նըման մաղձոտ չէր, այլ ընդհակառակ, մի զւարթ և ուրախերես մարդ էր, որ նստած նախաճաշ էր անում. Թէև ես նրան նայելիս քաղցածութեան ոեւէ նշան ցոյց չտւի, բայց էլի նա, մի կտոր հաց գցեց ինձ, իսկ, ես փոխանակ սովորական աչքածակ շների նման վրայ ընկնելու,



շնորհակալութիւնս յայտնելու համար նրա երեսը նայեցայ։ Հացագործը գոհ մնալով իմ քաղաքավարութիւնից, ժպտեց, ուստի նրան հաճելի լինելու համար հացի կտոր վերցնելով սկսեցի ծանր ծանր ծամել, միայն ցոյց տալու համար որ իր խաթեր համար է որ ուտում եմ, իմ վարմունքս այնքան դուր եկաւ հացագործին, որ ուզեց ինձ իր փուռի մօտ պահել. ես էլ փողոցի կողմ նստայ հասկացնելու համար, որ իր պաշտպանութիւն եմ խընդրում։

Հացագործը ոչ միայն իր պաշտպանութիւնը շնորհեց, այլ մինչև անգամ սկսեց գգւել ինձ, որից համարձակութիւն առայ ներս մտնելու, բայց այնպիսի ձևով, որ հասկացրի թէ իր թոյլտւութեամբ եմ ներս մտնում։ Իմ

այս ընթացքս այն առաւելու-
թիւն ունեցաւ, որ մինչև անգամ
իր դազգեահի մօտ տեղ ցոյց
տուեց ինձ նստելու, որ այնուհե-
տև այդ տեղը իմս եղաւ, այն-
քան ժամանակ, որքան ես այն-
տեղ մնացի։

Այդտեղ ինձ հետ շատ լաւ էին
վարւում. հացագործը ամեն ան-
գամ թէ ճաշելիս և թէ ընթրե-
լիս, ինձ էլ բաժին էր տալիս. ես
էլ իմ կողմից՝ երախտագիտու-
թեան և հաւատարմութեան ա-
պացոյցներ չէի խնայում։

Աչքերս միշտ նրա վրայ յա-
ռած, հետևում էի նրան, նոյնիսկ
այն, միջոցներին, երբ որևէ գոր-
ծի համար շուկայ էր գնում։

Այսպիսով բաւական ժամանակ
ապրեցի այդ տան մէջ, երբ օ-
րին մէկ, մի հաց գնող կին, ի
միջի այլ փողերի՝ մի արծաթէ



կեղծ փող ևս տուեց. հացագործը
փողը կնոջ վերադարձնելով յայտ-
նեց որ կեղծ է, ուստի խնդրում
որ փոխէ, բայց կինը պնդելով
էր իր փողի մաքրութեան վրայ և
հրաժարւում փոխելուց. վէճ
երկարեց, ի վերջոյ տէրս կա
տակի համար աւելացրեց.

— Այս փողի կեղծ լինել այն-
քան պարզ է, որ իմ շունս, մի
անբան կենդանի լինելով հան-
դերձ, կարող է վկայել։ Այստեղ
եկ Կարմրուկ, կանչեց ինձ, իր
դրած անունով։ Ես իսկոյն սե-
ղանի վրայ թռայ, հացագործը
բոլոր արծաթեայ փողեր առաջս
ածելով՝

— Նայի՛ր, յարեց նա, որևէ
կեղծ փող չկայ սրանց մէջ.

Ես էլ բոլոր փողերին լաւ նա-
յելուց յետոյ թաթս կեղծ փողի
վրայ դրած ջոկեցի միւսներից և

տիրոջս նայելով ցոյց տալ հասկացրի։

Հացագործը, որ զուարճութեան համար էր իմ կարծիքս հարցրել, զարմացած մնաց, տեսնելով որ ես առանց վարանման իրապէս կեղծ փողը իսկականներից ջոկեցի։ Կին ևս զարմացաւ և առանց տարակելու փոխեց փողը ու հեռացաւ։ Իսկ տէրս իր զարմանքը զսպել չկարողանալով կանչեց իր դրացիներին և իրողութիւնը պատմելով, իմ ընդունակութիւնս գովեց։

Դրացիները կասկածելով, անձամբ փորձեցին, կեղծ ու մաքուր փողեր իրար խառնած առաջս ածելով, ես էլ ամեն անգամ թաթս կեղծ փողերի վրայ դրած ցոյց էի տալիս իմ ճարպիկութիւնս։

Հաց գնող կինն էլ իր կողմից



ծանօթներին հանդիպելիս պատմում է իրողութիւնը, որով կարճ միջոցում իմ անունս հռչակւեց. այդ պատճառով իմ տիրոջս յաճախորդները չափազանց բազմացան, շատերը հեռաւոր թաղերից գալիս էին մեզնից հաց գնելու և իմ ճարտարութիւնս փորձելու. այնպէս որ ես էլ ամբողջ օրը զբաղւած էի նրանց հետաքրքրութիւն գոհացնելով, իսկ տէրս հազիւ կարողանում էր բոլորի պահանջը կատարել։

Ի վերջոյ հացագործը իր դրացիների հետ խօսելիս ստիպւած եղաւ խոստովանել, որ ես իրապէս մի գանձ արժեմ։ Բայց իր յաջողութիւնը երկար չը շարունակւեց։ Իմ աննշան ճարտարութիւնը տիրոջս նախանձորդներին գրգռեց, սկսեցին ինձ գողանալու միջոցներ փնտռել. թէև

տէրս ինձ աչքից չէր հեռացնում։

Մի օր էլ, մի կին ներս մտաւ հաց գնելու, տեսնելով, որ ես իմ սովորական տեղումն եմ, վեց հատ արծաթէ փող գցեց առաջս, որոնցից մէկը կեղծ էր. կեղծ փողը միւսներից ջոկելով, թաթս վրան դրած նրա երեսը նայեցի, որպէս թէ հարցնելու համար, արսեօք ճիշտ է գտածս։

— Այո, ասեց կինը, չես սխալւում, կեղծ փողն այդ է։

Յետոյ երկար նայեց ինձ, ես էլ նրան նայեցի, իսկ երբ հացի գինը վճարած դուրս էր գընում, ծածուկ նշան արեց, որ իրեն հետևեմ։

Ես շատ էի մտածում, մի հընար գտնել իմ տարօրինակ այլակերպութիւնը փոխելու մասին, և սակայն նկատել էի, թէ ինչ արտակարգ ուշադրութեամբ է



քննում ինձ այդ կինը, մի րոպէ կարծեցի թէ իմ դժբաղդութիւնս գուշակել է արդէն, բայց և այնպէս թողի որ գնայ, բաւականացայ միայն յետևից նայելով։ կինը մի քանի քայլ հեռանալիս նորից յետ նայեց, և տեսնելով, որ դեռ տեղումս նստած եմ, նորից նշան արեց որ իրեն հետևեմ։

Այն ժամանակ նկատելով որ հացագործը զբաղւած է, և ինձ չի նայում, առանց երկար մըտածելու ցած թռայ տեղիցս և կնոջ յետևից վազեցի. մի քանի ծուռ ու մուռ փողոցներ անցնելուց յետոյ, կինը մի դուռ բանալով ներս մտաւ։

— Ներս եկ, ասեց ինձ, վըստահ եղիր, որ չպիտի զղջաս։

Իմ ներս մտնելուց յետոյ դուռը կողպեց, և ինձ իր սենեակը ա-

ռաջնորդեց, որ մի գեղեցիկ և հարուստ կահաւորութեամբ զարդարուած սենեակ էր, որի լուսամուտներից մէկի առաջ մի հրաշագեղ աղջիկ նստած՝ մետաքսեայ կտորի վրայ ոսկէթելերով նաշխ էր անում։ Դա՝ ինձ այնտեղ տանող ողորմած կնոջ աղջիկն էր. որ կախարդական արհեստին հմուտ մի բարեսիրտ վարպետուհի էր։

— Աղջիկս, ասաց նրան մայրը, ահա հացագործին այն նշանաւոր շունը, որ կեղծ փողը իսկականներից ջոկելու ընդունակութիւն ունի։ Ես ինչպէս ասել եմ լուր լսածս օրը, կասկածում եմ սրա շուն լինելու մասին, և նորից պնդում եմ, որ սա կարող է մի անզգամի ձեռքով շան կերպարանք ստացած մարդ լինել։ Ուստի այսօր անձամբ գը-



նացի իրողութիւն ստուգելու և Բաղդադի հրաշալիք եղող այս շունը հետս բերելով քո կարծիքը իմանալու։

Աղջիկը ուշադիր կերպով ինձ նայելուց յետոյ ասեց.

— Մայրիկ, չես սխալւում, սա մի բարեկիրթ մարդ է, որին ով գիտէ, ինչ նենգ միտումով շան կերպարանք են տուել, ես իսկոյն քո կարծիքդ կհաստատեմ։

Օրիորդը վերկացաւ, վերցրեց ջրով լի մի աման. և մտքում ինչ որ բառեր մրմնջալով, ձեռքը մէջ թաթախեց ու յետոյ ջուրը ինձ վրայ թափելով բարձրաձայն արտասանեց.

— Եթէ շուն ես ծնուել. շուն մնացիր, իսկ եթէ մարդ ես ծընուել, այս ջրի զօրութեամբ մարդու կերպարանք առ։

Հազիւ օրիորդը այդ բառերը

արտասանեց, որ հմայութիւնը փարատելով, շան կորպարանքս անհետացաւ և ես իսկոյն առաջուայ նման մարդ դարձայ։

Այդպիսի մի մեծ բարեգործութիւնից յուզւելով. օրիորդի ոտն ընկայ և նրա քղանցքն համբուրելով՝ ասի նրան։

— Իմ պաշտելի ազատարար, այնքան երախտապարտ եմ ըզգում ինձ, քո արած անսահման բարութեան առաջ, որ բառ չեմ գտնում զգացումներս յայտնելու, աղաչում եմ, ասացէք, ինչով կարող եմ երախտամատոյց լինել ձեզ... Խնդրում եմ այսուհետև ինձ համարէք ձեր ստրուկ, իմ անձս ձեզ է պատկանում։

Այնուհետև պատմեցի նրանց, իմ ով լինելս, Էմինէի հետ ունեցած ամուսնութիւնս, նրա յամառութիւն, իմ համբերութիւնս,



նրա արտառոց կամեր, և ինձ հասցրած չարիքը, վերջապէս խօսքս վերջացնելով շնորհակալութիւնս յայտնեցի նրա մօրը, ինձ պատճառած անսահման երջանկութեան և բարութեան համար։

— Սիտի Նուման, ասեց օրիորդը, մի կողմ թողնենք քո դէպի ինձ ունեցած շնորհապարտութիւնդ, քեզ նման մի բարեկիրթ մարդու, այս հաճոյք պատճառելը, ինձ համար ամեն տեսակ երախտագիտութիւնից բարձր է։ Այժմս խօսենք Էմինէի վրայ, կնոջդ վրայ, որին ամուսնանալուց առաջ եմ ճանաչում, գիտեմ որ մի վհուկ է նա, ինչպէս նա գիտէ, որ ես էլ այդ արհեստի մէջ քիչ շատ հմուտ եմ, ըստ որում մի վարժուհուց ենք սովորել։ Շատ անգամ բաղնիքում

կրալու հանդիպել ենք, բայց որովհետև մեր բնաւորութիւնները իրար չեն բռնում, այդ պատճառով աշխատում եմ, որևէ յարաբերութիւն չունենալ հետը, և այդ դժւար չէ, մանաւանդ ինքն էլ ինձանից է խոյս տալիս, հետևաբար նրա անզգամութեան վրայ երբէք չեմ զարմանում, իսկ ինչ որ ես արի քեզ համար, դեռ բաւական չէ, պէտք է որ սկսածս աւարտեմ։ Եւ իսկապէս չպէտք է բաւականանալ միայն այն կախարդութեան լուծումով, որը քեզ արտաքսել էր մարդկային ընկերութիւնից. այլ տուն վերադառնալիս՝ պէտք է. Նրան ըստ արժանոյն պատժել, որ հնարաւորութիւն չունենայ նոր չարագործութիւններ կատարելու, այդ բանի համար ես կտամ քեզ անհրաժեշտ միջոցներ և ցուցմունքներ,



միայն առ այժմ սպասիր ինձ, ես իսկոյն կվերադառնամ։ Այս ասելով հարևան սենեակը մտաւ, թողնելով ինձ իր մօր, իմ ողորմած բարերարուհու հետ մենակ, որով ես առիթ ունեցայ, կրկին անգամ իմ խորին երախտագիտութիւնս յայտնելու։

— Ինչպէս տեսնում ես, աղջիկս կախարդական արհեստին մէջ էմինէից յետ չի մնում, բայց իր հմտութիւնը միշտ ի բարին է գործածում։ Կը զարմանաս, եթէ նրա այդ արհեստի միջոցաւ գործած բարիքների պատմութիւնը լսես. այդ է պատճառը, որ թողնում եմ երբեմն-երբեմն, նման դէպքերում իր արհեստի գաղտնիքներից օգտուելու, եթէ ոչ՝ երբէք չպիտի ներէի, որ նա իր հմտութիւնը ի չար գործ դընէր։

Մայրը նոր էր սկսել պատմել աղջկայ կատարած մի քանի հըրաշալիքների մասին, երբ ներս մտաւ աղջիկը, ձեռքին մի շիշ բռնած, ու ընդհատելով մօրը՝ դիմեց ինձ։

— Սիտի Նուման, գերինեներից իմացայ, որ էմինէն տան չէ, բայց շուտով կվերադառնայ, իմացայ նոյնպէս, որ կեղծաւորը քո բացակայութեան առթիւ, մեծ մտատանջութեան մէջ լինել կը ձեւացնէ սպասաւորներուդ ներկայութեան, նրանց այնպէս է հաւատացրել, որ իբր թէ ճաշի ժամանակ մի բան միտդ ընկնելով, դուրս ես գնացել և դուռը բաց թողել, որով մի շուն ներս է մտել և մինչև ճաշասենեակը գնացել, այդ պատճառով ինքը շանը ծեծել և դուրս է վռնդել...

Բայց աւելի լաւ է վերկաց և ա-



ռանց ուշանալու գնայ տունդ. այս շիշն էլ հետդ վերցրու, կը գնաս և սենեակումդ կսպասես, մինչև որ էմինէն վերադառնայ, այն ժամանակ ցած իջիր և նրա բակը մտած միջոցին յանկարծ դէմ ելիր, նա քո անակնկալ հանդիպումից շփոթուած կաշխատի խոյս տալ քեզանից. բայց հէնց այդ միջոցին, ձեռիդ պատրաստ ունեցած այս շշի ջուրը՝ նրա երեսին շփելով համարձակ կերպով արտասանիր հետևեալ խօսքերը.

— Քո անզգամութեանդ պատիժը այս կերպով ընդունիր։

«Աւելի բան չեմ ասի. աւելացրեց նա, դրա ազդեցութիւնը դու իսկոյն կտեսնես։

Բարերարուհուս այս խօսքերից յետոյ, որ երբէք չեմ մոռանամ, կրկին իմ երախտագիտութիւնս

յայտնելով մօր և աղջկան, վերցրի նրա առաջարկած շիշը և տուն վերադարձայ։

Ամէն բան վհուկ օրիորդի գուշակածի պէս եղաւ։ Հազիւ թէ կինս փողոցից բակը ներս մտաւ, երբ ես ջուրը ձեռքիս պատրաստ բռնած դէմ ելայ, ինձ տեսնելիս՝ մի սուր ճիչ արձակեց և ուզում էր յետ փախչել, բայց ես իսկոյն ջուրը երեսին շփելով արտասանեցի վհուկ օրիորդի սովորեցրած բառերը. որից անմիջապէս կինս մատակ ձիու փոխուեց, և ահա այն ձինն է, որ ձեր վեհափառութիւնն երէկ տեսաւ։ Եւ երբ նա դեռ շփոթման մէջ էր, իսկոյն բռնեցի նրա բաշից. և հակառակ նրա դիմադրութեան գոմը տարի, այնտեղ բերնին սանձ դնելով մի ամուր տեղ կապեցի, և յետոյ նրա յանցան-



քը ու անգթութիւնները երեսին տալով սկսեցի մտրակով ծեծել, ու միայն այն ժամանակ ծեծը դադարեցրի, երբ թևերս արդէն դադարել էին խփելուց, և որոշեցի այնուհետև ամէն օր նոյն պատիժ կրկնել…

— Հաւատացեալների իշխան, յարեց Սիտի Նուման, իր պատմութիւն վերջացնելով, յոյս ունիմ, որ ձեր վեհափառութիւնը, իմ վարմունքս ծանր չի համարի, և կբարեհաճի խոստովանել, որ այդպիսի չար ու նենգամիտ կնոջ այդպիսի պատիժը դեռ քիչ է։

Երբ ամիրապետը տեսաւ, որ Սիտի Նուման ուրիշ պատմելիք չունի այլևս.

— Իրաւ, եզակի է պատմութիւնդ, ասեց նրան սուլթանը, և կնոջդ անգթութիւնը ար-

ժանի է այդպիսի պատժի, բայց ուզում եմ որ դու իմանաս, թէ որքան ծանր է նրա համար իր տանջանքը, երբ նա այդպիսով անասունի շարք է անցել. ուստի հրամայում եմ քեզ, որ գնաս Նոբաթի վհուկը գտնես ու խնդրես, որ այդ այլափոխութեան վերջ տայ։ Եթէ վհուկների կամակորութեան ու խստութեան ծանօթ չլինէի, չէի միջամտի, բայց գիտենալով, որ մի օր Էմինէն իր վրէժը աւելի անգութ կերպով կարող է լուծել քեզանից, ուստի քո օգուտիդ համար պէտք է, որ ներողամիտ ու զիջող լինես նրա վերաբերմամբ ..

— Քո կամքդ կատարելը, ինձ համար երջանկութիւն է, վեհափառ տէր, ասեց Սիտի Նուման, և խոր երկրպագութիւն տալով հեռացաւ։

# ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ

Անցեալ տարուայ օրացոյցիս սոյն այս բաժնում, մենք արդէն տուել ենք մեր կարծիքը, այս անօրինակ պատերազմի վերջնական ելքի մասին, ուստի աւելորդ ենք համարում նորից ծանրանալ ենթադրութիւնների վրայ, որոնք շատ անգամ անհիմն են դուրս գալիս, միայն այս կարելի է ասել, որ այժմ հնարաւորութիւն չըկայ պատերազմի վախճանն անգամ գուշակելու, գուցէ մի քանի ամսից վերջանայ, գուցէ էլի տարիներ երկա-



Ն. Մ. Թ. Ն.
ՆԻԿՈԼԱՅ Բ.
կայսր ռուսաց

րի։ Իրողութիւնն այն է. որ պատերազմին խառնուած են նոր պետութիւններ, ինչպէս անցնող սեպտեմբերին, կռուի ասպարէզ նետուեց նաև Ռումանիան...

Մենք այս յօդուածում տալիս ենք նկարներ կռուող և չէզօք պետութեանց թագաւորների, և հնարաւորութեան չափով ծանօթութիւն նրանց բնակչութեան թւի, և ոյժի մասին. որ կարծում ենք զուրկ չեն լինի հետաքրքրութիւնից, ի հարկէ մեր տեղեկութիւններ վերցւած են պատերազմից առաջ հրատարակւած թւերից, որոնք ներկայումս փոփոխւած կարող են լինել...

## ԱՆԳԼԻԱ

Սահմանադրական թագաւորութիւն. Գէորգ V թագաւոր Բրիտանիայի և կայսր Հնդկաստանի. ծն. 1865 թ. գահ է բարձրացել



1910 թ. Բնակչութեան թիւը 46 միլ. և կէս. գաղութներն էլ միասին հաշւած 377 միլիոն։ Պատերազմի ժամանակ զօրք է պահում 6,200,000, խաղաղ ժամանակ 425,000, ռազմանաւերի թիւը հազարից աւելի է։ Մայրաք. Լոնդոն։



Գէորգ Ե.

## ՖՐԱՆՍԻԱ

Հասարակապետութիւն։ Նախագահ Րայմոնդ Պուանկարէ. Բնակչութեան թիւը՝ 33,500,000, գաղութների բնակչութեան 53 միլ. 500 հազար։



Պուանկարէ

Պատերազմի ժամանակ զօրք է պահում 4,372,090, խաղաղ ժամանակ 609,864. ռազմանաւերի թիւ 382։ Մայրաքաղաք Փարիզ։

## ԻՏԱԼԻԱ

Սահմանադրական թագաւորութիւն։ Թագաւոր Վիկտոր—Էմմանուէլ III. ծն. 1864 թ. բնակչութեան թիւը 35 269,377, գաղութների բնակչութեան թիւը 1,598,899 հոգի. պատերազմի ժամանակ 304,620, զօրք. ռազմանաւերի թիւը 329. մայրաքաղաք Հռոմ։



Վ.-Էմմանուէլ

## ՍԵՐԲԻԱ

Սահմանադրական թագաւորութիւն։ Թագաւոր Պետր I.



ծն. 1844 թ. բնակչութեանը թիւը 4,446,293 հոգի. պատերազմի ժամանակ զօրքերի թիւ 325,680. խաղաղ ժամանակ 36,000, մայրաքաղաքն է Բելգրադ։



Պետր I.

## ՉԵՐՆՈԳՈՐԻԱ

Սահմանադրական իշխանութիւն. Նիկոլայ I թագաւոր։ Բնակչութեան թիւը 435,000, պատերազմի ժամանակ զօրքերի թիւը 37,200, մայրաքաղաք Ցետինե։



Նիկոլայ I.

## ՌՈՒՄԱՆԻԱ

Սահմանադրական թագաւորութիւն. Ֆերդինանդ I թագաւոր ծն. 1865 թ. բընակիչների թիւը 7,601,664 հոգի, զօրք պատերազմի ժամանակ309, 702. մայրաքաղ. Բուխարեստ։



Ֆերդինանդ

## ԳԵՐՄԱՆԻԱ

Դաշնակից սահմանադրական պետութիւն, կայսրը Վիլհելմ II ծն. 1859, բնակիչների թիւ 66 միլիոն, գաղութների բնակչութեան թիւ 12 ու կէս միլիոն։ Զօրք պատերազմի ժա-



Վիլհելմ II.



մանակ 2,550,000 ռազմանաւեր 115 հատ, մայրաքաղաք Բեռլին։

## ԱՒՍՏՐՕ-ՈՒՆԳԱՐԻԱ

Կայսր Ֆրանց Յովսէփ, ծն. 1830 թ. գահ է բարձրացել 1848։ Բնակիչ. թիւը 51,390,223. զօրք պատերազ. ժամանկ 1,872,178, ռազմանաւ 204, մայրք. Վիէննա։



Ֆրանց Յովս.

## ՏԱՃԿԱՍՏԱՆ

Սահմանադրական միապետութիւն Սուլթան Մահմէդ V. ծն. 1844 թ. գահ է բարձրացել 1908 թ. բնակչութեան թիւը24,028,000, զօրք պատերազ-



Մուհամմէդ V.

մի ժամանակ 1,683,000 մարդ, խաղաղ ժամանակ 360,000, ռազմանաւ 34. մայրաքաղաք Պոլիս։

## ԲՈՒԼՂԱՐԻԱ

Սահմանադրական միապետութիւն, Թագաւոր ֆերդինանդ I. բնակչութեան թիւ 4 միլիոն 500 հազար։ Զօրք պատերազմի ժամանակ 375,000, խաղաղ ժամանակ 80,000. մայրաքաղաքը Սոֆիա։



Ֆերդինանդ I.





Ալբերտ
Թագաւոր Բելգիայի



Կոստանդին I.
Թագ. Յունաստ.



Գուստաւ Ե.
Թագ. Շվեդիայի



Ալֆոնս ԺԳ.
Թագ. Իսպանիայի

## ՔԱՆԻՈՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ

*Օրավարձի հաշվարար*

| Ամսական | Օրական | Ամսական | Օրավարձը պէտք է լինի | | Ամսական | Օրավարձը պէտք է լինի | |
|---|---|---|---|---|---|---|---|
| Ր. | Կոպ. | Ր. | Ր. | Կոպ. | Ր. | Ր. | Կոպ. |
| 5 | $16^{3}/_{2}$ | 23 | — | $76^{2}/_{3}$ | 41 | 1 | $36^{2}/_{3}$ |
| 6 | 20 | 24 | — | 80 | 42 | 1 | 40 |
| 7 | $23^{1}/_{3}$ | 25 | — | $83^{3}/_{3}$ | 43 | 1 | $43^{1}/_{3}$ |
| 8 | $26_{2}/_{3}$ | 26 | — | $86^{2}/_{3}$ | 44 | 1 | $46_{2}/_{3}$ |
| 9 | 30 | 27 | — | 90 | 45 | 1 | 50 |
| 10 | $33^{1}/_{3}$ | 28 | — | $93^{1}/_{3}$ | 46 | 1 | $53^{1}/_{3}$ |
| 11 | $36^{2}/_{3}$ | 29 | — | $96^{2}/_{3}$ | 47 | 1 | $56_{2}/_{3}$ |
| I2 | 40 | 30 | 1 | — | 48 | 1 | 60 |
| 13 | $43^{1}/_{3}$ | 31 | 1 | $3^{1}/_{3}$ | 49 | 1 | $63^{1}/_{3}$ |
| 14 | $46^{2}/_{3}$ | 32 | 1 | $6^{2}/_{3}$ | 50 | 1 | $66^{2}/_{3}$ |
| 15 | 50 | 33 | 1 | 10 | 51 | 1 | 70 |
| 16 | $53^{1}/_{3}$ | 34 | 1 | $13^{1}/_{3}$ | 52 | 1 | $73^{2}/_{3}$ |
| 17 | $56^{2}/_{3}$ | 35 | 1 | $16^{2}/_{3}$ | 53 | 1 | $76^{2}/_{3}$ |
| 18 | 60 | 36 | 1 | 20 | 54 | 1 | 80 |
| 19 | $63^{1}/_{3}$ | 37 | 1 | $23^{2}/_{3}$ | 55 | 1 | $83^{1}/_{3}$ |
| 20 | $66^{1}/_{3}$ | 38 | 1 | $26^{2}/_{3}$ | 56 | 1 | $86^{2}/_{3}$ |
| 21 | 70 | 39 | 1 | 30 | 57 | 1 | 90 |
| 22 | $73^{1}/_{3}$ | 40 | 1 | $33^{1}/_{3}$ | 58 | 1 | $93^{1}/_{3}$ |

## ՄՇՏՆՋԵՆԱԿԱՆ ԳՈՒՇԱԿՈՒԹԻՒՆՔ

—

*(Ըստ Էֆեմէրստու)*

1917 թւ.

Երբ արեւը մարտի 21-ին մտնի Խոյի առաջին աստիճանը, տարուայ իշխողը կլինի արեգակն Աղեղնաւորի հետ, որ տունն է Լուսնթագի։ Այս տարի կլինի առատութիւն ցորենի և ուրիշ հացապտուղների։ Ձմրան սկիզբը բարեխառն, վերջ ցուրտ և քամի։ Ամառը նոյնպէս բարեխառն, բայց պտուղներ պէտք է շուտ հաւաքել, որ յորդառատ անձրեւներից չփչանան։ Աշնան կըփչեն քամիներ, պտուղներ կը լինեն դիւրահաս և քաղցրահամ, և բոլոր ծառապտուղների առատութիւն կլինի, այս տարի ծառեր տնկել լաւ է։ Շների և մեծ անասունների հիւանդութիւն, որից շատեր կսատկեն։ Ծովը

կալեկոծւր, երեխաներ կհիւանդանան: Այս տարի երեւում է շատ արիւնհեղութիւն, որովհետեւ Երեւակը երեւում է Երկնքի առաջին տան, այդ պատճառով կլինեն պատերազմներ սպանութիւններ, և վտանգ թագաւորներին, վիճմունը, խռովութիւնք. տարաձայնութիւնք, և վաճառականութեան վնաս: Նոյնը գուշակում է Հրատը Լուսնթագի հետ կցած, Շատ մարդիկ կը պատրաստեն գաղթելու, որովհետեւ Փայլածուն և Լուսին իշխում են ճանապարհորդաց և նաւորդաց վրայ:

—

## ՏԱՐԻՆ ԳՈՒՇԱԿՈՂ ՏԱՆՈՒՏԷՐԸ

(Ըստ Էֆեմէրտու)

Առիւծը երբ տանուտէր լինի *) տարին լինի լիարար, վաստակ առատ, ծառերը պտղաբերութիւնից ճիւղքակտոր կլինեն, խաղողը քաղցրահամ և գինին շատ: Ամառը շատ անձրևներ, յետոյ երաշտ: Քաղաքաց աւերումն Բաբելոնում ժողովրդոց շարժումն, Ասորիքում տրտմութիւն, Յունաստանից զօրք կվերկենայ և շատ գաւառներ ոտից տակ կտան:

### Լուսնի օրերի գուշակութիւններ

1. Օրը բարի է ամեն բանի համար, Ադամը այսօր ստեղծուեց: Նոյը տապանի սկիզբն այսօր դրաւ, Մովսէսն ժողովդրին այսօր Եգիպտոսից հանեց. Սողո-

*) Այս տարւայ տանուտէրը Առիւծն է:

մոնը տաճարի սկիզբն այսօր դրաւ, Գաբրիէլն այսօր ողջոյն տուաւ Մարիամին։ Տնկել, ճանապարհորդել, հիմք դնել լաւ է, ծնածը կարճակեաց կլինի հիւանդը 14, 21 կամ 28 օրից կառողջանայ, կորածը կգտնուի, երազն տարին կըկատարուի։

2. Օրը բարի չէ. Նախաստեղծն այսօր խաբուեց, Կայինը այսօր սպանեց Աբէլին, հիւանդը մինչև 12 օր կասկածելի է, որից յետոյ կլաւանայ, կորածը մինչև 40 օրում կգտնուի, տնկել, նաւորգել լաւ է, ծնուած երկարակեաց, խոնարհ և շնացող կլինի, երազն երեք օրից կըկատարուի։

3. Օրը բարի է. Հեղինէն խաչն այսօր գտաւ, Սօղոմոնը այսօր ծնաւ. գնել, վաճառել բարի է, կորածը կգտնուի փախածը կդառնայ, ծնուած շնորհալի, պատե-



րազմող բայց կարճակեաց կլինի, երազը բարին կը կատարուի։

4. Օրը լաւ չէ. մի գնիր, մի վաճառիր, Նաբուգոդոնոսորը տաճարն այսօր քակեց. մօգերն այսօր ընծայ բերին, Հերովդէսն այսօր մօգերից խաբուեցաւ. հիւանդը կմեռնի, ծնուածը փառքի և մեծութեան կհասնի. երազը սուտ է։

5. Օրը բարի է ամեն բանի. Նոյը այսօր տապան մտաւ, Սողոմոնը տաճարն այսօր շինեց, սերմանել, տնկել, ճանապարհորդել, նաւարկել լաւ է. հիւանդը կառողջանայ, ծնածը երեխայ հասակում կմեռնի, կորածը կը գտնուի, երազը բարին կատարուի,

6. Օրը բարի է, Տէրն այսօր առաքեալներին քարոզութեան ուղարկեց, մանուկներին ուսման տալ, գնել, վաճառել, տնկել, սեր-

մանել լաւ է, կորածը կգտնուի, հիւանդը կառողջանայ, ծնուածը թէև բաղդաւոր՝ բայց հիւանդոտ կլինի, երազը բարին կատարուի։

7. Օրը վատ է. Տէրը այսօր Ադամին և Եւային դրախտից արտաքսեց. հիւանդը շատ կնեղուի, ծնուածը պիսակոտ, գող և երկարակեաց կլինի, երազը սուտ է։

8. Օրը բարի է, լեզուները այսօր բաժանուեցան. կորածը կը գտնուի. հիւանդը կասկածաւոր է. ծնուածը երկարակեաց կլինի, երազն 3 օրից կատարուի։

9. Օրը բարի է. Քրիստոսն այսօր մկրտեցաւ, գնել, վաճառել, ճանապարհորդել, թագաւոր տեսնել, մեծի մօտ գնալ, դատաստան մտնել բարի է, ծնուածը երկարակեաց կլինի, հիւանդը կառողջանայ, երազն բարին կատարուի։



10. Օր բարի չէ, բան մի գործիր, ամեն բանից պատրաստ կաց, մի երդուիր, փախածը կը դառնայ, հիւանդը կառողջանայ, ծնուածը երկարակեաց կլինի, երազն երեք օրից կատարուի։

11. Օրը բարի չէ, Ջրհեղեղն այսօր սկսուեց, մի գործիր, մի երդնուր, ջուր մի մտնիր, կէտը Յովնանին այսօր կուլ տուեց, հիւանդը կլաւանայ, ծնուածը կմեռնի, երազը օրը կատարուի։

12. Օրը չար է, մի երդնուր, ամեն բանից զգոյշ կաց և աղօթիր, հիւանդը կմեռնի, ծնուածը միջակեաց կլինի. երազն երեք օրէն կատարուի։

13. Օրը բարի է, գործել, հիմք դնել հարսանիք անել. հիւանդը 8 օր նեղութիւն կըկրէ. ծնուածը իմաստուն կլինի, երազը բարին կատարուի։

14. Օրը չար է. մի գործիր, մի երդնուր, հիւանդը 15 օրից կլաւանայ, ծնուածը թոյլ կլինի, երազը 40 օրից յետոյ կատարուի:

15. Օրը բարի է, շինել, տընկել, վաճառել, ճանապարհորդել, Քրիստոսն այսօր դժոխքն աւրեց. կորածը կգտնուի, հիւանդ չորս օրից յետոյ կփսաւի, ծնուածը երկար կապրի, երազն օրը կատարուի:

16. Օրը բարի է. սերմանել, տնկել, հարսանիք անել, երեխային ուսման տալ, մեծի մօտ գընալ. հիւանդը 28 օրից յետոյ կըլաւանայ, ծնուածը գեղեցիկ և մեծատուն կլինի, երազն երեք օրից յետոյ կատարուի:

17. Օրը բարի է. հիմք դնել, պատերազմել, հիւանդը 18 օրից յետոյ կլաւանայ, ծնուածը զւարթ



և գեղեցիկ կլինի, երազը նոյն օր կատարուի:

18. Օրը բարի է. հարսանիք անել, ճանապարհորդել, հիւանդը կառողջանայ ծնուածը շատախօս կլինի, արիւն թողնել օգտաւէտ է. երազը բարի է,

19. Օրը բարի է. սերմանել տնկել, հարսանիք անել, մեծի մօտ գնալ, հիւանդը կմեռնի, ծնուածը հանճարեղ կլինի բայց վարքով շնացող, երազը բարին կատարուի:

20. Օրը բարի է, սերմանել, շինել վաճառել, ճանապարհորդել, մեծի մօտ գնալ լաւ է. հիւանդը կասկածելի է, ծնուածը յաղթանդամ և աղօթասէր կլինի, երազը սուտ է:

21. Օրը չար է. մի գործիր, մի վաճառիր, մի երդուիր, հի-

ւանդը կմեռնի, ծնուածը աղօթասէր կլինի, երազը սուտ է։

22. Օրը բարի չէ. մի զայրանար, մեղք մի գործիր, մի յուղւիր, բայց հիմք դնել, վաճառել, սերմանել մանուկ ուսման տալ լաւ է, ծնուածը մեծերին սիրելի կլինի, երազը բարին կատարւի։

23. Օրը բարի է. գնիր վաճառիր, ճանապարհորդիր եթէ կարիք ունիս, կորածը կգտնւի, փախածը կդառնայ, ծնուածը բաղդաւոր կլինի, երազը 30 օրից կատարւի։

24. Օրը չար է. ամեն բանից պատրաստ կաց, ճանապարհը մի երթայ, մի վաճառի, մի գնի, մեծի մօտ մի գնայ. փախածը կդառնայ. հիւանդը կառողջանայ, ծնուածը անվաստակ կլինի, երազը սուտ է։

25. Օրը չար է. մի երդնուր,



տեղ մի գնայ, փախածը կդառնայ, հիւանդը կմեռնի, ծնուածը շատամօրուս և շնացող կլինի, երազը սուտ է։

26. Օրը բարի է,գործիր, բայց մի երդնուր, փոխ անել, ճանապարհ գնալ,սերմանել, գնել, վաճառել,հարսնիք անել, լաւ է,հիւանդը կվնասւի, ծնուածը շուտ կմեռնի, երազը բարի է։

27. Օրը բարի է. գնել վաճառելու համար, կորած կգտնւի, փախածը կդառնայ, հարսնիք անել, երեխայ մկրտել լաւ է. երազը սուտ է։

28. Օրը բարի է ամեն բանի. գնել, սերմանել, մեծի մօտ գնալ, հարսանիք անել, երեխանց ուսման տալ, լաւ է, կորածը չի գտնւի, հիւանդը չի ապրի, ծընուածը իմաստուն կլինի, երազը 3 օրից կատարւի։

29. Օրը բարի է ամեն բան գործելու համար, տնկել, շինել, հարսնիք անել, գնել, վաճառել լաւ է, հիւանդը կմեռնի, ծնուածը բաղդաւոր բայց արբեցող և շընացող կլինի, երազը լաւ է։

30. Օրը բարի է, պսակել, կընքել, հիմք դնել, ճանապարհ գընալ, կորածը գտնուի, փախածը կդառնայ, հիւանդը կառողջանայ, ծնուած, բաղդաւոր և հարբեցող կլինի, երազը բարին կատարուի։

# ԵՐԱԶԱՑՈՅՑ

## Ա.

Աստուած երազի մէջ տեսնել լաւ է և բարի։ Աբեղայ տեսնելը փառք է, երբեմն էլ կռիւ։ Ագռաւ տեսնել վատ է։ Ալևոր իրեն տեսնելը՝ շատ երկար կապրի։ Ակներ գոյնզգոյն՝ բարեկամ իշխանաւորներ են։ Աղ տեսնելը՝ սգոյ նշան է։ Աղքատը կռւի խափանումն է։ Աղբակոյտ տեսնել՝ նեղսրտութեան մէջ կընկնես։ Աղաւնին՝ շնորհք է։ Աղբիւր՝ շատ բաներից օգտուելու նշան է։ Աղբիւրից ջուր խմել, տանել՝ շնորհի կարժանանաս։ Աղի ձուկը՝ հոգս և կսկիծ է։ Աղուէսը՝ թշնամուց երկիւղ կսպասուի։ Աղջիկ տեսնել՝ խնդութիւն է։ Աղջիկ ամուսնացնել, հոգսերի թեթևացումն է։ Աղքատին հիւրասիրել՝ օրհնութիւն կվայելես։ Ամպ, հոգսերի կուտակումն է։ Այգի տես-

նել, հարստանալու նշան է։ Այծը, թշնամի է։ Անթառամ ծաղիկը, բաղդի նորոգումն է։ Անձրևը անսահման բարիք է։ Անտառը, անհատում բաղդաւորութիւն է։ Աչքի հանելը, կնոջ կամ որդու մահ է։ Ապարանջան, նեղութիւն է։ Առիւծը, մեծ մարդ է։ Ատամի ցաւելը, դժբաղդութեան նշան է։ Ատամի հանել, տանը մահ կը պատահի։ Ատամի կոտրելը, դժբաղդութեան կը հանդիպես։ Արաղ խմել, տրտմութիւն է և կսկիծ։ Արևի խաւարում, մեծ մարդի մահ է։ Արիւն առնելը, հօգսերից կը թեթևանայ։ Արծաթ դրամը բարիքների կպատահես։ Արծիւ տեսնել, բարձր աստիճանի կհասնես։ Արջ տեսնելը մեծ մարդից երկիւղ կայ։ Արտ ցանելը, բարեյուսութեան նշան է։ Արտ կանաչ, ընտանիքի բաղ-



դաւորութիւն է։ Արօր շինելը, ապագայի յոյս է։ Արօրով վարելը, լաւ է։ Աւազակին սպանել, վտանգից կազատուես։ Աւազանի մէջ լուացուելը շնորհք կստանաս։ Աւետարան տեսնել, մուրազ է։ Աւերակ, ձախորդութեան նշան է։

## Բ.

Բրինձը տեսնել, հարստութիւն և գանձ է։ Բուրվառ, հակառակութեան նշան է։ Բու տրսնել կամ ձայն լսել, դժբաղդ լուր է։ Բադը, մեծ մարդ է։ Բազէ տեսնել, հակառակորդից զգուշացիր։ Բահը, վատ է։ Բամբակը, բարի է։ Բանտ նստել, նեղութիւն է։ Բանջար քաղել, բարի և լաւ է։ Բարեկամին մեռած տեսնելը, խնդութիւն է։ Բարձր տեղեր թռչելը, մեծութեան կը հասնիս։ Բարձրից ընկնել, ատ-

տիճանից զրկուել է։ Բոբիկ մանգալը, թշնամիդ կզօրանայ։

Գ.

Գայլը թշնամի է։ Գազար ուտել շահաբեր է։ Գանձ տեսնելը շահաբեր գործ է։ Գառը տեսնել, լաւ է։ Գառ մորթել, գործին վընաս գայ։ Գաւազան ձեռքին բռնել, պատիւ է։ Գիւղացի տեսնել բարութեան կհանդիպես։ Գերանի կոտրել, տան մեծ կմեռնի։ Գերեզմանի վրայ լաց լինելը, մեծ ուրախութիւն է։ Գինդ ունենալ ականջին, զաւակ կը ծնուի։ Գիր գրելը, շատ բարի է։ Գլուխ սանրել չար բաղդ է։ Գըլուխը լուանալը, սուգ է։ Գլուխ թրաշել, մահու բօթ կլսես։ Գողին սպանել, թշնամուդ կտապալես։ Գոմէշ արածել, լաւ է։ Գորտի ձայն լսել, պատերազմի համբաւ է։ Գութան մեծամեծ բարիք է։



Դ,

Դագաղ տեսնել, չարագուշակ լուր է։ Դագաղում իրան տեսնել, շատ կապրի։ Դարման,լիութիւն է։ Դդումը, հիւանդութիւն է։ Դեղձ ուտելը, առողջութիւն է։ Դմակ ուտել հիւանդութիւն է։ Դրամ գտնելը, բաղդ է։

Ե.

Եզ տեսնել հիւանդութիւն է։ Եկեղեցի շինել մեծ փառք է։ Եղ տեսնել կամ ուտել, բարւոյ կը հանդիպի։ Եպիսկոպոս տեսնելը, մեծ շնորքի կարժանանայ։ Երգի ձայն լսելը մեծ աւետիք է։ Երես լուանալ, ծանրութիւններից կազատուի։ Երազի մէջ երազ տեսնել բարի է և լաւ։

Զ.

Զանգակը, բարի համբաւ է։ Զինւոր դառնալ, թշնամու դէմ յաղթող կհանդիսանայ։ Զուռնայ

ածելը ուրախալի համբաւ է։ Զօրք և զօրագունդ, ցաւ և հիւանդութիւն է։

Է.

Էշ տեսնելը գովլաթ է։ Էրան անելը, տանը բարիք կաւելանայ։ Էրկանք աղալը, հեռու տեղից ձայն կլսես։

Ը.

Ընծայ տալ, մեծ բարիք է։Ընկոյզ հաւաքել կամ ուտել,հիւանդութիւն է։

Թ.

Թագաւոր տեսնել, բարիք է, Թագուհի տեսնել, շնորհ է։ Թագայ հաց տեսնել, հիւանդը կառողջանայ, Թագի տեսնելը, փոքրիկ անյաջողութիւն է։ Թան խմելը, դրութիւնը կապահովի։ Թառ ածելը, բարի լուր կլսես։ Թարխունը, կսկիծ է։ Թթու ուտելը, կսկիծ է։ Թութուն ծխելը,



վիշտ է։ Թուխս հարստութիւն է։ Թուրը, կուի նշան է։

Ժ.

Ժամ գնալը, երկար կեանք է։ Ժամարար տեսնել, յաջողութիւն է։ Ժամացոյցը, աւետիք է։ Ժայռը, յոյս է։ Ժողովը խռովութիւն է։

Ի.

Իժ տեսնելը, թշնամի է։ Իրեն տրտում տեսնելը, ուրախութիւն է, ուրախ՝ տրտմութիւն է։

Լ.

Լակլակ, բարի է։ Լէկղի, վատ է։ Լաց լինել ուրախութիւն է։ Լոյս խաղաղութիւն է։ Լուացք անելը, նեղութիւն է։Լուսին տեսնելը, լաւ է։

Խ.

Խաղող քաղելը, լաւ է, ուտելը, լաց է, սպիտակ խաղող, լաւ

է։ Խաչը յաջողութիւն է։ Խաչ համբուրել, մուրազ է։ Խիարը, լաւ է։ Խմոր հունցելը, լաւ է։ Խնձոր քաղելը, շատ լաւ է։ Խնոցի հարելը բարիք է։ Խոզ անյաջողութիւն է։ Խորոված ուտելը, հիւանդութիւն է։ Խունկը, բարի է։

Ծ.

Ծաղիկ քաղելը լաւ է։ Ծաղիկ փնջել, մուրազ է։ Ծառ տնկելը, յոյս է։ Ծաղկած ծառը, մեծ ուրախութիւն է։ Ծառ բարձրանալը, լաւ է։ Ծերունի տեսնել, բարի է։ Ծիծ ուտել, հիմնական բարիք է։ Ծով ընկնել, անաջողութիւն է։ Ծուխ, լաւ չէ։

Կ.

Կաթ խմելը, լաւ է։ Կաթողիկոս տեսնել, լաւ է։ Կալ տեսնել բարիք է։ Կամուրջ շինելը, գործի յաջողութիւն է։ Կայծակի



ձայն լսելը, խռովութիւն է։ Կատու տեսնել, նախանձոտ մարդից զգոյշ կաց։ Կարագը լաւ է։ Կարկուտը, անբաղդութիւն է։ Կացին տեսնել, վատ է։ Կերակուր եփելը, փորձանք է։ Կառք նստել, լաւ է։ Կին առնել, յաւ է։ Կշեռքը, թանգութեան նշան է։ Կովը բարիք է։ Կռունկ տեսնել, բարի է։ Կրակ տեսնելը, փորձանք է։

Հ.

Հալւայ, հիւանդութիւն է։ Համեմ քաղելը կամ ուտել, բարի է։ Հայելի տեսնել, մաքուր վաստակ է։ Հասկ քաղելը, ուրախութիւն է։ Հարսանիք տեսնելը, խռովութիւն է։ Հաւ տեսնելը, հիւանդութիւն է։ Հիւանդ տեսնել, վատ է։ Հրեշտակ տեսնելը, մեծ բարիք է։

Ձ.

Ձեռք լուալը, արդարութեան նշան է: Ձէթ լաւ է: Ձի հեծնել մուրազ է: Ձիւնը, հալալ աշխատանք է: Ձմերուկ ուտելը, լաւէ: Ձու, հակառակութիւն է: Ձուկը, չար լեզու է,

Ղ.

Ղավուրմայ ուտելը, սրտնեղութիւն է: Ղասապը, խռովութիւն է: Ղումաշ հագնելը, հարստանալու նշան է:

Ճ.

Ճաշակել, սրբութեան նշան է: Ճառ ասելը, համբաւ ստանալ է: Ճանապարհ գնալը, բարի է: Ճրագ, բաղդաւոր զաւակներ ունենալու նշան է: Ճգնաւոր բարի է:

Մ.

Մարգարիտ տեսնելը, շնորհք է: Մազ կտրելը, վատ է: Մա-



ծուն ուտել, ապահովութիւն է: Մեղր ուտելը, հիւանդութիւն է: Մեռելի հետ խօսելը, վատ է: Միս հիւանդութիւն է:Մուկ տեսնելը կռիւ է: Մերկ լինելը, գըրկանք է: Մոլայ տեսնելը, վատ է: Մեխակը, լաւ է:

Յ.

Յոպոպը, վատ է: Յոպոպը տանիքի վրայ, մահուան գոյժ է:

Ն.

Նամակ գրելը, բարի լուրի կսպասես: Նապաստակ տեսնելը, վախկոտ թշնամի է: Նաւ տեսնելը, օտարութեան կգնաս: Նուռ, գանձ և հարստութիւն է:

Շ.

Շամամը, բարեբաղդ վիճակ է: Շագանակ ուտել, նեղութիւն է: Շան հաչելը, յանդիմանութիւն է: Շահը տեսնելը, մեծ բարիք

է։ Շաքար ուտելը, նեղութիւն է։ Շիպը վատ է։

Ո.

Ոսկի, վաստակ է։ Ոսպ քաղելը, հոգսերից կազատուես։ Ուլ, բարեյաջող դիպուած է։ Ուղտը, թշնամի է։ Ուխտ գնալը, մուրազ է։

Չ.

Չամիչ ուտելը, վատ է։ Չաբուխ հագնելը, ճանապարհորդութեան նշան է։ Չուխայ հագնելը, բաղդաւորութեան նշան է։ Չորթանը, հիւանդութիւն է։ Չէչոտ մարդ տեսնելը, գործերի ձախորդութիւն է։

Պ.

Պաս ուտելը, անյաջողութիւն է։ Պանիր ուտել նեղութիւն է։ Պապի հետ խօսելը, օրհնութիւն է։ Պատ քանդելը, ընտանիքին



փորձանք գայ։ Պղպեղը, կսկիծ է։ Պսակուել, լաւ է։

Ջ.

Ջաղաց շինելը, մեծութիւն է։ Ջուր խմելը, լաւ է։ Ջորի տեսնելը, վատ է։

Ռ.

Ռեհան քաղելը, որդի կունենաս։ Ռոճիկ ստանալը, լաւ է։ Ռօմ խմելը, կսկիծ է։

Ս.

Սապոնը, կսկիծ է։Սար բարձրանալը լաւ է։ Սագ տեսնելը, լաւ է։ Սաղ ածելը, վիշտ է։Սըխտոր կսկիծ է։ Սուրբ տեսնելը, յաջողութիւն է։ Սև հագնելը, վատ է։ Սայլին նստելը, նեղութիւն է։ Սոխը, վատ է։

Վ.

Վարդ քաղելը, կամուսնանաս։ Վերմակը, հարուստ կին է։ Վար-

դալեա տեսնելը, լաւ է։ Վազ տնկելը, յաջողութիւն է։

Տ.

Տուն շինելը, շատ լաւ է։ Տան փուլ գալը, փորձանք է։ Տէրտէր զգեստաւորուած, բարիք կստանաս։ Տառեխ, մտատանջութիւն է. Տանձ ուտելը, հիւանդութիւն է։ Տիրուհու հետ խօսելը, շատ լաւ է.

Ց.

Ցորենը խաղաղութիւն է։ Ցեխը տրտմութիւն է։ Ցանք անել, ապահով վիճակ է։

Փ.

Փեթակ, լաւ ապագայ է։ Փայտ կտրել բարի է։ Փողի ձայն լսելը, ուրախութիւն է։ Փող գտնելը, յաջողութիւն է։

Ք.

Քաղաք տեսնել, լաւ է։ Քաչալ անյաջողութիւն է։ Քացախը, դառն



խօսքեր կլսես։ Քոռ մարդ տեսնել, ձախորդութիւն է։ Քուրդ տեսնելը, լաւ չէ,

Օ.

Օժիտ ստանալ լաւ է։ Օծուել անուշահոտ իւղերով, յաջողութիւն կը գտնես և անունդ կտարածուի· Օձ տեսնել վատ է, Օղի խմելը, վատ է։ Օդի մէջ թռչելը, լաւ է։

Լոյս տեսաւ եւ վաճառւում է։

# I

# ԷՖԻՄԵՐՏԷ

*հարուստ երազահանով եւ վիճակահաններով*

ԳԻՆՆ Է 70 ԿՈՊԷԿ

# II

# ԾԱՂՐԱԾՈՒ

*Անեկդոտների ընդարձակ ժողովածու*

ԳԻՆՆ Է 50 ԿՈՊԷԿ

**Մամուլի տակ են**

*Հազար եւ մէկ գիշերներ*
*Ծաղկեփունջ*
*Ռազմի երգեր*

Գումարով գնողներին զգալի զեղչ կտրուի։ Դիմել Թիֆլիս, Հավլաբար, Խոջիվանքսկի ուլից, № 16 Խ. Տէր-Յովհաննիսեանին կամ Тифлисъ Авлаб. Ходживанкская ул. № 16, Х. Теръ-Оганесянцу

## Թ Ա Ղ Դ Ա Դ Ո Ւ Շ Ա Կ

| | |
|---|---|
| ԽՈՅՆ | ՁՈՒԿ |
| ՋՐՀՈՍ | ԱՅԾԵՂՋԻՒՐ |
| ԱՂԵՂՆԱՒՈՐ | ԿԱՐԻՃ |
| ԿՇԻՌ | ԿՈՅՍՆ |
| ԱՌԻՒԾ | ԽԵՑԳԵՏԻՆ |
| ԵՐԿԱՒՈՐ | ՑՈՒԼՆ |

## Խ Ո Յ Ն

Ո՛վ մարդ, ինչպէս արևի լոյսը կեանք և կենդանութիւն է տալիս աշխարհին, այնպէս էլ, յաջողութիւնդ, ուրախութիւն և բաղդաւորութիւն կբերի քեզ։ Ինչի մասին, որ մտածում ես, կատարիր, միայն զգոյշ կաց չըշեղուես արդարութեան ճանապարհից։

## Ձ Ո Ւ Կ

Ո՛վ մարդ՝ քո դժւարութիւնն անցաւ, որովհետև այժմ քեզ բարի է մօտենում. ինչ որ մըտքումդ դրել ես սկսիր, յաջողութիւն կունենաս։

## Ջ Ր Հ Ո Ս

Ո՛վ մարդ՝ բաղդաւոր էիր, բայց անբաղդացար, որովհետև չափից դուրս նախանձոտ ես, ուզում ես հնձել այն տեղից, ուր



երբէք չես ցանել, ուստի դարձիր դէպի արդարութիւնը, և դու նորից բաղդաւոր կլինես։

## ԱՅԾԵՂՋԻՒՐ

Ո՛վ մարդ՝ միայն Աստուած կարող է քեզ օգնել, դու դեռ շատ դժբախտ օրեր կտեսնես, մեծ տրամութիւն կգայ քեզ, բայց յոյսդ Աստուծոյ վրայ որ դնես, նորից դրութիւնդ կբարւոքւի և շատերը քեզ կնախանձեն։

## ԱՂԵՂՆԱՒՈՐ

Ո՛վ մարդ՝ քո խորհուրդը բարին կատարեցաւ, դու կուրախանաս, կհարստանաս, թէ աղջիկ ես կբաղդաւորուիս գեղեցիկ և հարուստ փեսայի գնալով, թէ ծընող ես քո որդոց փառքով կփառաւորուիս։

## Կ Ա Ր Ի Ճ

Ո՛վ մարդ՝ զգուշացիր, որով-

հետև մէկ, կայ որ աշխատում է կարիճի նման խայթել քեզ. Նրա աչքերը կապոյտ են, մազերը սև, գոյնը փոփոխական, այդ տեսակ մարդը ոչ ոքի բարիք չի կամենայ, այլ ուրիշի անկման մէջն է որոնում իր ապահովութիւնը։

Գ Շ Ի Ռ

Ո՛վ մարդ՝ աւետիք տամ քեզ, որովհետև ինչ որ խորհել ես կը կատարուի և դու կուրախանաս։ Քո սիրտդ բարի է, այդ պատճառով, քո ցանկացածի պէս կվարձատրուիս։

Կ Ո Յ Ս Ն

Ո՛վ մարդ՝ թէև դրութիւնդ բաւական դժուար է, բայց մի յուսահատուիր, ինչպէս դաժան ձմերան յաջորդում է բեղմնաւոր գարուն, այնպէս էլ, քո ներկայ տխրութեանդ կը յաջորդեն ուրախ օրեր։



Ա Ռ Ի Ւ Ծ

Ո՛վ մարդ՝ քո սրտի ցանկութիւն կը կատարուի, և մի ուրախ լուր պիտի լսես, բայց քո առաջը մի անխուսափելի կռիւ կայ, որից եթէ յաղթող դուրս գաս, բաղդաւոր կլինես։

ԽԵՑԳԵՏԻՆ

Ո՛վ մարդ՝ զգուշացնում եմ քեզ. թո՛ղ չար մտքերը, կը խայտառակուիս, նպատակիդ չես հասնիր, աւելի լաւ է, որ վերմակիդ չափով ոտներդ մեկնես, քո խորհրդատուները կեղծ են, այդ պատճառով քեզ գործից են դարձրել։

ԵՐԿԱՒՈՐՆ

Ո՛վ մարդ՝ քո աղօթքդ ընդունելի եղաւ, ուստի ինչ որ խորհել ես, կը կատարուի, յաջողութիւն կունենաս և շատ կը հա-

ըլլատանաս, բայց աղքատներին օգնել չմոռանաս։

## Ց Ո Ւ Լ Ն

Ո՛վ մարդ՝ կարելի է քո բաղդդ երկու խօսքով ասել, մտածմունքդ անիրագործելի է, և դու վնասից դատ ոչ մի օգուտ չես ունենայ նրան անձնատուր լինելով։

---

## ԳՈՒՇԱԿՈՒԹԻՒՆՔ ՄԱՐՄՆԱԽԱՂԱՑ

Թէ գագաթ խաղայ՝ բարի է. Թէ ծոծրակ խաղայ, չարից կազատուի. Թէ ամբողջ գլուխ խաղայ, շատ բարի է. Թէ ճակատ խաղայ, գանձ կգտնէ. Թէ աջ ունք խաղայ, կհիւանդանայ. Թէ ձախը, լիութեան կհանդիպի. Թէ աջ աչքը խաղայ, յաջողութեան նշան է. Թէ ձախ աչքը, կուի և



արտասունքի նշան է. Թէ ամբողջ քիթը խաղայ, լաւ է. Թէ քթի ծայրը խաղայ, պարտքից կազատուի. Թէ երկու պինչը խաղայ, կինը կմեռնի. Թէ աջ երես խաղայ, հարստանալու նշան է. Թէ ձախ երես խաղայ կհիւանդանայ, Թէ շրթունքներ խաղան, որևէ սիրածի հետ կհամբուրուի. Թէ ականջներ խաղան, բարի լուր կլսէ. Թէ փորը խաղայ, մեծ յաջողութեան նշան է. Թէ պորտ խաղայ, կին կառնէ և որդի կունենայ. Թէ աճուկներ խաղան, մերձաւորութիւն կունենայ կամ մեծ բաղդի կարժանանայ. Թէ կռնակը խաղայ, կհարստանայ, բայց չարից պատրաստ կենայ. Թէ կողը խաղայ, շահի կհանդիպի. Թէ ձախը՝ որդի կծնի. Թէ աջ ձուն խաղայ, կհարստանայ. Թէ ձախը, օտար կնոջ կմերձենայ։

## ԻՄԱՍՏՈՒՆ ԽՐԱՏՆԵՐ

Բարեկամին անյաջողութեանդ միջոցին փորձիր։

— Բարեկամիդ յաջողութեան միջոցին, հրաւիրելիս միայն գընայ, իսկ փորձանքի և նեղութեան մէջ եղած միջոցին, առանց հրաւիրելու գնայ։

— Բարեկամութեանդ միջոցին լսած գաղտնիքը թշնամութեանդ միջոցին մի յայտնիր։

— Անզգամներից ոչ մէկին քեզ բարեկամ մի անիր, որ դու էլ նրանց շարքում չդասուիս։

— Եթէ կամենում ես անզգամ կնոջ բարիք անել, գետը քցիր նրան։

— Ով լռել չգիտէ, նա խօսել էլ չգիտէ։

— Հարստութիւն ունեցիր բարեկամներիդ համար, ոչ թէ բարեկամներ հարստութեան համար։

Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм.ССР
им. А.

3731 Ca2

## ՄԵՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵ

Ուսեալ Պանդուխտ, Տ. Ամիրճանեանի 1
Ծաղկեփունջ, Երգերի ընդարձակ ժողովածու . . —
Ծաղրածու, Անեկդոտների ընդարձ. ժողովածու . . 5
Էֆիմերտէ, Ընդարձ. երազահանով 7
Ռազմի երգեր, Պատկերազ. երգարան 5

---

**ԳԻՆՆ Է 30 ԿՈՊ.**

Ցանկացողները կարող են դիմել Թիֆ
լիսի բոլոր հայ գրախանութներին, կ
ինձ Тифлисъ, Авлаб. Ходживанкск
ул. № 16. Х. Теръ-Оганесянцу. Գ
մարով գնողներին [illegible]
Նապարհածախսը
անձամբ դիմողը,
ՄՈԻԼ» տպարան,

059
3-95

6720

2013

ՀՀ Ազգային գրադարան
NL0032289